

ՆՈՐ ԿԵԱՆՔ



ՀԱՆՐԻՍ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ո՛Վ ԿԸ ԽԱՐԵՆ

Կ. Պալեն Տէյլի Թեղեկրաֆի հեռագրեր մը հաղորդեց Տատեան փաշային հրաժարած ըլլալուն լուրը: Վարչութեան ատենապետը պաշտօնէն կը բաշտի, վասն զի իր անհատական երեք նամակները «Դրօշակ»ի մէջ հրատարակուած են: Այդ թղթակցութեամբ Արթին փաշա կ'իմացնէ եղբր սուլթանին երգումը իր գաւիններուն գլխուն վրայ՝ Հայոց զիջողութիւններ ընելու ընդարձակ սահմանի մէջ: Նախարարներու ընդդիմադրութեամբ կայսերական այս յանձնառութիւնը գործադրուած չըլլալով Արթին փաշա հայ ազգէն կը պախարակուի, ուստի եւ պաշտօնէն հրաժարելու հարկին մէջ կը գտնուի:

Այդ նամակները տեսանք. երկուք են եւ ոչ երեք. ու սուլթանին կողմէ երգումի մը հետքն անգամ չկայ անոնց մէջ: Անմեղունակ հատուածներ որոնք Արթին փաշային յարմար սեպած պահուն հրատարակուելու կանխամտածութեամբ գրուած ու ժընէլ խրկուած են: Մեր վարչապետը միամիտ մէկը չէ. կրնար ենթադրել թէ առ իր եզբօրրդին զրած նամակները կը խմբագրութեան մը կը յանձնուին, անշուշտ զրազրաւանի մը խորը պահուելու վիճակուած չեն: Ասանց մէջ սուլթանին անհանց բառ մը խօս չկայ. քսան տարիէ ի վեր յեղեղուած, հինցած մաշած բացատրութիւններն են: Ամբողջին իմաստը մէկ բառի մէջ կրնայ ամփոփուիլ. «Ի՛նչալլահ»:

Արթին փաշա միշտ ջանադիր է Հայոց մէջ ժողովրդագական մնալ. ու երբ կը զգայ թէ իր վարկը ցածնալու վրայ է, կը տքնի բարձրացնել զայն արհեստական միջոցներով, նման այն զրամատուններուն որոնք Պորտայի խաղերով իրենց սնանկութեան մահաժամը կը յետաձգեն: Սուլթանը հաշտ աչօք կը դիտէ Տատեանին հնարամտութիւնները իր ժողովրդականութիւնը պահպանելու համար: Գործիք մը պէտք է լաւ ծառայէ: Նուրեան մը օգուտ չունի սուլթանին. Հայ ժողովուրդը անկէ չի խաբուիր:

Տատեանին հրաժարականը իր խաղացած զաւեշտին — ազգին համար ողբերգութիւն — մէկ տեսարանն էր. ներկայացումը կը շարունակուի ուրիշ տեսարաններով:

Տէյլի Թեղեկրաֆի հեռագրէն բանի մը օրեր ետքը Կ. Պալեն մեկի կը հեռագրէին հետեւեալը.

«Արթին փաշա հրաժարականը տուած պահուն ազգի գիտէր թէ պիտի չընդունուէր. բայց իր այս ընթացքով կը հաւատար թէ պիտի կրնար ամրապնդել իր դիրքը, եւ չըմեղել ազգին առջեւ: Վարչութիւնը չընդունեց իր ատենապետին հրաժարականը, եւ հրաւիրեց Օրմանեան պատրիարքը Երլուզի պալատը երթալ, եւ աշխատիլ որ այդ հրաժարականը չընդունուի: Տատեան երեք անգամ Երլուզ կանչուեցաւ, պարզ ձեւակերպութիւն: Խոստում տրուեցաւ քանի մը զիջողութեան համար, ինչպէս կարգադրութիւն Կիլիկիոյ կաթողիկոսական խնդրին, արձակուամբ բանտարկեալներու: Օրմանեան ալ պալատ հրաւիրուեցաւ այս կայսերական խոստումները լսելու:»

Սպասենք խաղին շարունակութեանը:

* * *

Երբ Տատեանի նամակները եւ անոնց յարակից պատմութիւնը հրատարակուիլ սկսաւ, նոյն միջոցներուն ալ Բարիզի մեծ հանգէսի մը մէջ երեցաւ «Սուլթանին գաղտնի դիւանագիտութիւնը» վերնազրին տակ պատմական յօդուած մը որուն քաղաքական կարեւորութիւնը նկատողութեան աննշալ ծանօթացուցինք զայն մեր վերջին թիւով: Թուականներու բազմաթիւութիւնը ցոյց կուտայ թէ ժընէլի հետ բանակցութեան համար Տատեանի փութաշանութիւնը կը զուգարկուի սուլթանին կողմէն կեդրոնական Գոմիթէին եղած դիմումներուն: Կարգաւոր երկու հրատարակութիւնները կ'անդրադառնանք թէ Երլուզի պալատը աւագ կարեւորութիւն տուած է կեդրոնական Գոմիթէին: Ժընէլի համար Արթին փաշան է որ իրեն ներկայացուցիչ կը կարգէ, եղբորորդին. քաղաքական նշանակութեան զուրկ, առանց ո՛ր եւ է պաշտօնական համարմանքի տեսակցութիւն մը, ընտանեկան գործ մը: Անգին՝ սուլթանին ներկայացուցիչն է, Բարիզի զեսպան Միւնիւր պէյ, որ յեղափոխական մարմնի մը հետ յարաբերութեան մտնելու հրամանը կը ստանայ. կարեւի չէ ենթադրել թէ Արթին փաշա այդ բանակցութեան վրայ տեղեկութիւն ունեցած չըլլայ. Երլուզի պալատին մէջ հայկական խնդրին ղեկավարը Արթին փաշան է: Այդ բանակցութեանց արդիւնաւորութեանը համար ոչինչ ըրած է. Եթէ

օգտակար կարգադրութեան մը անկեղծօրէն ըզձացող ըլլար անտարակոյս պիտի մտաբերէր Միւնիք պէյի եւ իր խրկած առաքեալին ձեռնարկները ներդաշնակութեան մէջ դնել:

Ուշագրաւ պարագայ մըն է որ Տատեանին ժընէլը դրած նամակներուն մէջ հետք մը չի տեսնուիր դրական ու եւ է պզտիկ առաջարկութեան մը իսկ. վերացական բացատրութիւններ միայն, տարտամ ու անորոշ խոստումներ. իսկ անդին կը գտնենք չափաւոր բայց յստակ պահանջումներ որոնք դրապէս խորհող միտք մը կը յայտնեն: Այդ պահանջումները վերստին կը ներկայացնենք:

Ա. Ընդհանուր ներում:

Բ. Զարդերէն յետոյ երկրէն հեռացած գաղթականներուն ազատ դարձ:

Գ. Հայերուն դէմ ճնշողական ու արգելիչ սնորհիւթեանց բարձում:

Դ. Նիւթական նպաստ այն գաղթականներուն որոնք ի չգոյժ դրամի չէին կրնար իրենց տունը—տեղը դառնալ:

Գոմիթէին այս առաջարկներուն տրուած գոհացումը պիտի համարուէր իբր լուրջ գրաւական մը խոստացուած բարեկարգութեանց աստիճանաբար գործադրութեանը: Արթին փաշա որ այս ամէնուն անշուշտ տեղեակ էր, չէր կրնար ենթադրել թէ հայ ազգը կրնար այս պահանջումներէն նուազ կարգադրութեամբ մը բաւականանալ. իսկ երբ այս խիստ չափաւոր եւ տարրական առաջարկներն իսկ, սուլթանին իրատեղիը գտնէ մասամբ ընդունուել յետոյ, անգործադրելի կը մնան, ուրեմն կրնա՞ր Տատեան փաշա յուսալ թէ ժընէլի հետ բանակցութիւններովը աւելի բան մը կրնար ձեռք բերել: Ո՛չ: Ի՞նչ էր ուրեմն Արթին փաշային խաղացած խաղը:

Տարածուած աւելի կամ նուազ հիմնաւոր լուրերը դեռ կատարելապէս օտուգած չենք. ո՛չ անոնց վրայ հիմնուելով, ո՛չ ալ ենթադրութիւններէ առաջնորդուելով կը խօսինք. միայն պաշտօնական հրատարակութիւններէն կրնանք եզրակացութեան մը յանդիլ: Արթին փաշայի քաղաքականութիւնը եղած է չէզոքացնել Կեղրոնական Գոմիթէին եւ Բարիզի օսմանեան դեսպանին բանակցութիւնները, միւս կողմէն իր վրայ առնելով ժընէլցիները խաղցնելու պատասխանատուութիւնը: Այսպէս գործնականին մէջ Արթին փաշա յաջողեցաւ թէ՛ բարեկարգութեանց սկզբնաւորութիւն մը արդիւլել, ինչ որ շատ հաճելի գործ մըն է սուլթանին աչքին, և թէ կ' Պոլիս ո՛ր և է անհաճոյ դէպքի պայթումը արգիլել: Ուստի չենք զարմանար որ երեք տարուան ժամանակամիջոցի մէջ սուլթանը լիառատ պարգեւներով վարձատրէ իր քաղաքականութեան ուշիմ եւ ճարպիկ գործակատարը, ու անոր կուրծքը շքանշաններով ծածկէ:

Արթին փաշա հիմա նորանոր խաբեբայութիւններով պիտի շարունակէ ազգը տրծելու քաղաքականութիւնը:



Երբ 1896ի վերջերը Արթին փաշա սուլթանին հրամանաւ ազգային վարչապետութիւնը ստանձնեց, անմիջապէս Եւրոպա խրկեց իր զաւակը, Տիրան պէյ Տատեան, հանդարտութեան յորդորելու յեղափոխական մարմինները, խոստանալով թէ բարեկարգութիւնները աստիճանաբար պիտի գործադրուին: Տիրան պէյ Լանտան այցելած ատեն խօսեցաւ իր հօրը զգացումներուն վրայ, եւ յայտարարեց թէ Տատեան անունը կրնայ երաշխաւորութիւն մը համարուիլ ազգին աչքին: Պատասխան ստացաւ թէ Արթին փաշայի ազգասիրական զգացումները որքան ալ զօրաւոր եղած ըլլան, իրողութիւններ կան աչքերնուս առջեւ. սուլթանը ամէն անգամ որ նեղ պարագայի մը մէջ հայ ազգը խաբել խաբիբել՝ ուզէ միշտ Արթին փաշայի ազգասիրական զգացումներուն կ'ապաւինի, ուստի առանց վարանուծի կարելի է ըսել թէ անցեալը պիտի կրկնուի:

Այս յայտարարութիւնը հրատարակուեցաւ 97 դեկտեմբեր 10 ին «Զդո՛յշ» վերնագրով յօդուածին մէջ հետեւեալ տողերով.

« Համիտ ամէն ատեն որ նեղը մտնելով, պէտք կը «տեսնէ անուշութեամբ խաբել հայ ազգը, կը դիմէ Արթին Տատեանի, եւ այս դժբաղդն ալ իրեն յանձնուած «պաշտօնը իր տաղանդովը եւ անունովը կը յաջողցնէ: «...Տարակոյս չկայ թէ Տատեանի վրայ մեծ յոյսեր դրուած են ազգային դատը հարուածելու համար: Հայ «ազգը աւելի զուշաւորութեան պարտական է Տատեանի «օրով:»

Յայտնի է թէ 1896ի վերջերը հայկական խնդիրը սկսաւ յուզուիլ նաեւ Ֆրանսայի խորհրդարանին մէջ. սեարտաքին գործերու նախարար Պ. Հանթօն հարկադրուեցաւ ճշմարտութիւնը այս եւ չծածկել: Թիւրքիոյ համար ծանր հետեւանքներու կը սպասուէր. եւ ահա նոյն Պ. Հանթօն քիչ ետքը կարողացաւ տաղնուպին առջեւը առնել, յայտարարելով ժողովին բեմէն թէ «Թիւրքիոյ մէջ բարենորոգումներու գործադրութեան սկզբնաւորութիւնը տեղի կ'ունենայ: Աւանձնաշնորհումները կը յարգուին, եւ Պոլսոյ պատրիարքարանը իր օրինաւոր կազմակերպութիւնը ստացաւ:» Այս դրական ապացոյցին վրայ հանդարտութիւնը տիրեց: Տատեան Յարութիւն փաշան էր որ այդ նեղ օրերը սուլթանին այս մեծ ծառայութիւնը մատուց: Եւ հիմա երեք տարուան հաշուեկշիռը.

Ա. Անընդհատ շարունակութիւն կոստորածի, թալանի, որոնց վերջին գրուացը Մուշէն է:

Բ. Արհեստական միջոցներով Հայաստանի մէջ բռնաւոր սով:

Գ. Հայաստանի շատ կողմը, եւ մասնաւորապէս Վասպուրական, Հայոց հողերուն Բիւրտանուն տրուելը, սուլթանին իրատեղիը:

Ե. Մանձարձակ տիրապետութիւն սարսափի. ու Պոլիս բերդարգելարան մը վարձած Հայոց համար:

Զ. Սահմանադրութեան դադարում, Կիլիկիոյ կաթողիկոսական օրինաւոր ընտրութեան բեկանում. Ընչում օրէնքի, աւանդութեան:

Եւայն, եւայն, եւայն:

Արթին փաշա Օրմանեանին հետ ձեռք ձեռքի տալով յաջողեցաւ խարբերյութեան հրաշալի դրութեամբ մը այս ամէն սճրագործութիւնները իր հովանիին տակ պատուաբար:

Եւ սակայն վերջապէս ո՞վ կը խաբեն. ա՞զգը թէ իրենք գիրենք: Աս ալ հարցում մըն է որուն պատասխանը ապագան պիտի տայ:

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ Կ. ՊՈԼԻՍ

Բ

Նախորդ յօդուածով պարզեցի 19րդ դարուն սկիզբէն մինչեւ անոր առաջին կէտը Կ. Պոլիս հայ գաղթականներուն եւ Հայաստանի Հայոց բարոյական ու տնտեսական փոխադարձ յարաբերութեանց վիճակը: Երբ դարը կը սկսէր, Կ. Պոլսոյ Հայերը չունենալով Հայաստանի Հայոց վրայ ո՛ր եւ է գերազանցութիւն, չէին կրնար նշանաւոր ծառայութիւն մատուցանել Մայր-Հայրենիքին:

Խրիմի պատերազմին վերջանալէն ետքը Կ. Պոլսոյ Հայերը արդէն տիրացած ըլլալով մտաւորական, տնտեսական, քաղաքական բազմաթիւ առաւելութեանց, Հայաստան անոնցմէ կրնար օգտուիլ:

Տաննեկներորդ դարու կէսէն մինչեւ քառորդ դար մը Կ. Պոլսոյ հայութիւնը նախ խանդավառեցաւ պատմական հայրենիքին յիշատակովը, եւ յետոյ սկսաւ հետամտիլ ժամանակակից հայրենիքին որուն վերածնունդը իրեն նպատակ առաջադրեց, ազգայնութեան կազմակերպութեամբը:

Սահմանադրութեան հաստատութիւնը առաջին եւ գլխաւոր միջոցը եղաւ հայ ազգութիւնը օժանեան պետութեան մէջ օրինապէս մինչեւ աստիճան մը ինքնավարութեան դրութեամբ օժտելու: Ինչ որ միայն աւանդութիւն էր եւ սովորութիւն, ա՛յ սահմանադրութեամբ հաստատուն, զրական, անվիճելի օրէնքի վերածուցեալ: Ամբողջ հայ ազգը կեդրոնացումի եւ ապակեդրոնացումի ներպաշնակ միաւորութեամբ առանձինն վարչական իշխանութիւն մը կազմեց Թիւրքիոյ մէջ: Հայաստան հզօրապէս օգտուեցաւ սահմանադրութենէն: Իւրաքանչիւր նահանգ ազգային ներքին շրջանակին պատկանող գործերուն համար որոշ, յստակ, օրինաւոր կազմակերպութիւն մը ստացաւ: Նահանգը կ'ընտրէ իր երեսփոխանութիւնը, որմէ կը բղիթին կրօնական, քաղաքական ժողովները, եւ ասոնցմէ կը կրթական, տնտեսական մարմինները: Երեսփոխանական մարմին միջոցաւ զաւար կ'ընտրէ իր առաջնորդը: Հայաստանի իւրաքանչիւր նահանգ միօրինակ ինքնավար կազմակերպութեամբ միաբանեցան Պոլիս Ազգային ժողովին շուրջը, պատրիարքով մը եւ կեդրոնական վարչութեամբ մը: Պոլիս՝ Թիւրքիոյ մայրաքաղաքը եւ արեւելեան

խնդրին կեդրոնը՝ նաեւ Թիւրքիոյ Հայոց ալ կեդրոնը գարձաւ: Հայաստան ու Պոլիս այլ եւս սերտ կապերով իրարու միացած իբր մէկ մարմին կ'ապրին եւ կը գործեն:

Կ. Պոլսոյ Հայ գաղթականութիւնը Հայաստանի Հայոց ընդարձակ շրջանակի մը մէջ ինքնուրոյն կազմակերպութիւն մը ապահովելով հանդերձ զբաց նաեւ թէ Մայր-Հայրենիքին մտաւորական եւ քաղաքական կեանքը բարուրդով է որ վերածնունդը պիտի սկսի: Պոլիս բազմաթիւ ընկերութիւններ ծնունդ առին Հայաստանի Հայոց օգտակար ըլլալու նպատակաւ: Ասոնցմէ երկուքը միայն յիշատակենք, իբր ամէնէն աւելի զգալապէս ժամանակին ողին պատկերացնող, Բարեգործականը եւ Անձնուէրը:

Բարեգործական ընկերութեան նպատակն էր Կիլիկիան գարգայնել: Լուսաւորչական եւ կաթոլիկ գարգացած հայ երիտասարդները միաբանեցան այս նպատակին համար: Կ. Պոլսոյ 1860ի սերունդը սկսաւ մտածել թէ կրօնքը ժողովրդի մը ազգայնութեան սատարներէն մէկն է, աւելի կամ նուազ պահպանողական զօրութիւն մը ըստ պարագաներուն. բայց Հայրենիքին վերածնունդին համար Հայերը պէտք է ազատական ծրագրի մը շուրջը միաբանէին: Ազատութիւն պահանջող ժողովուրդ մը իր յայտարարին առաջին յօդուածը խղճի կատարել ազատութիւնը պէտք է զնէ: Այլ ընկերութեան մէջ խօսեցաւ նաեւ Նալբանդեանց, «Ազատ Աստուած»ի բանաստեղծը: Մեծ կակ դուժար մը հաւաքուելով, կաթոլիկ Հայ մը, բմիչի Շիշմահեան — զրականութեան մէջ եաքէն Գերենց — Կիլիկիա գնաց ազարակ մը գնելու, եւ երկրագործական վարժարանի մը հիմնարկութեամբ ընկերութեան նպատակը իրականացնելու աշխատելու: Կաթոլիկ Հայոց ուստրիարք Հասունը թէ՛ հոսմէականութեան եւ թէ՛ իր պատրիարքութեան շահերուն վտանգաւոր նկատելով կաթոլիկ հայ երիտասարդութեան միաբանութիւնը լուսաւորչականներուն հետ, սկսաւ գաւել, ու Դրան մատնելով ընկերութիւնը խափանեց անոր բարգաւաճումը: Գաղափարը սակայն չէր կրնար մեռնիլ:

Միւս ընկերութիւնը, Անձնուէրը, Կ. Պոլսոյ հայ պանդուխտներուն կարգալ զրել կը սորվեցնէր. իր հիմնադիրներէն Քրիստոստուր Ղազարոսեան երեսուն տարի անդադար ամէն կիրակի Ղալաթիոյ եկեղեցին կը կենար եւ կը դասախօսէր: Հազարաւոր հայ պանդուխտներ Անձնուէր ընկերութեան շնորհիւ Պոլիս կարգալ զրել, նախ նահան ուսում սորվելով հայրենիք վերադարձան. Պոլսէն միասին կը տանէին նախակրթութիւն եւ դրամ:

Անոնց քով Պոլսոյ խաներն ու թաղերը կազմուեցան բազմաթիւ ընկերութիւններ եւ կը նպաստէին հայրենիքի պարգններուն: Պոլիս իր քաղաքական առաւելութիւններովը ու Եւրոպայի հետ յարաբերութեանց համար սենեցած դիրութեամբը կարող կ'ըլլար Հայաստանի մտաւոր գարգացումին առաջնորդել:

Խրիմեան Հայրիկին պատրիարքութեամբը Հայաստան եւ Պոլիս աւելի սերտ իրարու կապուեցան: Մինչեւ այն ատեն պատրիարքները կուգային Պոլսոյ շրջականերէն

կամ փոքր-Հայքէն: Նիկոմիդիա, Պրուսա, Ռուսուլթո, Իզմիր, ասոնք էին պատրիարքներ պատրաստող մենաշընորհեալ քաղաքները: Իսկ Հայրիկ բնիկ վանքի մըն էր, Հայաստանը քարոզած էր, ու վանէն կը բերէին զինքը: Ազգային ժողովը հայ ազգին գաղափարներուն եւ զգացումներուն թարգմանը կը հանդիսանար: Այդ նոր սերունդին պարալլուելը Օտեանն էր, որ Հայրիկին ձեռքէն բռնեց եւ պատրիարքական աթոռը բարձրացուց, հանդարտեցնելով խորագէտ եւ հեռաստեա Ալի փաշային վրդովումները:

Հայրիկ պատրիարքը ինքզինքը հռչակեց « Հայաստանի վշտերուն պատկերը»: Հայաստանի բարենորոգումներու խնդիրը որ կամաց կամաց մտքերու մէջ պատրաստուած էր արդէն, Ազգային ժողովին ատենանը ելաւ: « Հայաստանի հարստահարութեանց » խնդիր անունին տակ հայկական խնդիրը ծնաւ: Պոլսոյ երեսփոխանները, եկեղեցական, ուսուցիչ, վաճառական, ամէն գասակարգ, ներկայացուցեցան Հարստահարութեանց բնիչ յանձնաժողովին մէջ: Հայկական խնդիրը Հայաստանէն բղխելով Պոլսի կը զօրանար 1870ին, եւ առաջ կ'երթար օր մը ամբողջ Եւրոպայի խնդիրը գտնալու համար:



Թիւրքիա 1875ին արդէն վտանգաւոր վիճակի մը հասած էր: Խորիմի պատերազմէն ի վեր քսան տարի անցած էր. այդ ժամանակամիջոցին Ռուսիա ինքնամիտի աշխատանքով զօրացած էր եւ կը պատրաստուէր իր արեւելեան քաղաքականութիւնը հզօրացնելու առաջ տանելու: Ֆրանսայի 1870 ի պարտութեամբը Անգլիա միայնակ մնաց Արեւելեան խնդրին մէջ, ուստի եւ Թիւրքիա Ռուսիոյ դէմ ո՛ր եւ է հաստատուն պատուար չունէր: Հէրսէք-Պոնիայէն յեղափոխական շփոթը արձագանգ կուտար ամբողջ Եւրոպական Թիւրքիա. Պուլկարիա ապստամբելու կը պատրաստուէր, ու կրետէ երբեք հանդարտած չունէր: Երիտասարդ Թիւրքերը Միտհատ փաշայէն առաջնորդուելով կը յուսային կայսրութեան փրկութիւնը սահմանադրութեան մը մէջ փնտռել, ինչ որ բիշ յետոյ պիտի փորձէին, գահընկէց ընելով Սուլթան Ազիզը:

Կ. Պոլսոյ 1850ի սերունդը Հայաստանի համար քառորդ դար մը ոգեւորուելէ, աշխատելէ, կուռելէ յետոյ, յաջորդ սերունդին կը թողուր կատարելագործելու ժառանգութիւն մը: Նորերը հայրենասիրական մէկ հոգիէ թէեւ ներշնչեալ, բայց զանազան եղանակներով գաստիարակուած էին: Գլխաւորաբար հինգ տեսակ կրթական հաստատութեան ծնունդ էր 1876ի սերունդը:

Էն բազմաթիւ աշակերտները թաղային վարժարաններէ ելած էին: Այդ դպրոցները ժամանակին հետ բիշ բիշ առաջ գացեր էին, եւ զգալի կերպով յառաջդիմած. բայց ազգասիրութիւնը կը գերազանցէր հոն ուսումը: Պատանիները իրենց սուները « ազգային ճիւղութեան » մթնոլորտի մը մէջ կը մեծնային. ամէն օր կօիւ, աղմուկ, վէճ կը լսէին

ազգային գործերու համար. ու դպրոցին մէջ երբ հին Հայոց պատմութիւնը կը սորվէին, երբ ազգային երգերը կ'երգէին, նաեւ իրենք ալ կը վիճէին, կը կուռէին, խելքերին հասած չհասած, օրուան ազգային խնդիրներուն վրայ. ու արդէն հանրային գործունեայ կեանքի համար պատրաստուած կ'ելլէին դպրոցէն:

Խառնեղ հիմնուած Նուպար-Շահնազարեան վարժարանը, զուտ ազգային միակ զիշերօթիկ վարժարանն էր. թաղին տղաքը հոն կը յաճախէին, բայց մեծ մասամբ ունեւոր գասակարգին պատկանողներուն գաւակներն էին զիշերօթիկները: Այդ դպրոցին մէջ աւելի եռանդոտ ու ազգասիրական գաստիարակութիւն մը կը տրուէր, քան թէ հիմնաւոր կրթութիւն մը:

Շահնազարեանէն շատ աւելի հիմնաւոր էր Պէպէքի ամերիկեան Բուպրթ քոլէճի կրթութիւնը: Այդ հաստատութիւնը միջազգային էր թէեւ, բայց աշակերտները գրեթէ հայ եւ պուլկար էին միայն: Հայ աշակերտներու մեծամասնութիւնը կը պատկանէր Պոլսոյ նորեկ գաւառացիներուն, մանաւանդ կեսարացիներուն: Այս վերջիններս Պոլսոյ անտեսական հրապարակին վրայ հետզհետէ կը զօրանային. իրենց գաւակները Բուպրթ քոլէճ իրկելով անոնց լաւ կրթութիւն մը կուտային, եւ ապագային համար լրջամիտ գործողներ կը պատրաստէին:

Ղալաթա-Սարայի լիսէն, Թիւրք եւ ֆրանսական հաստատութիւն մը, գիտութիւններուն կարեւոր տեղ մը կուտար: Հիմնապէս միջազգային դպրոցն էր, հայ, պուլկար, յոյն, թիւրք, ամէն ցեղ, ամէն կրօնք խառնամառն: Հայ տղաքը իրենց ինքնուրուծութիւնը կը պահէին, ու թէեւ եռանդոտ ազգասէրներ չէին, բայց ճշունքին ներքեւ աւելի խտացեալ զգացումով մը կ'ապրէին:

Վենետիկի Ռափայէլեան վարժարանէն յարատեւ շարունակութեամբ աշակերտները կուպային, բիշ բացառութեամբ ամենքը կաթոլիկ Հայեր, եւ օրէ օր պոլսեցիներուն թիւը նուազելով: Պատմական Հայաստանին յիշատակը արթնցնելու եւ սիրցնելու հզօրացնելու նպատակով էին Միթիթարեաններու նախորդ աշակերտները. նորերն ալ ժամանակակից Հայաստանին պիտի ծառայէին:

Այդ միեւնոյն ժամանակամիջոցին Կ. Պոլսոյ հայ աղջիկներն ալ բաւական ուսում ստացած էին: Հայ կիներ ալ եւս ազգութիւնը միայն եկեղեցիին մէջ չէր տեսներ. ինքն ալ հայ հայրենիքի մը գաղափարը ունէր, Հայաստան մը կը սիրէր, զայն կը փնտռէր ու անոր համար պիտի սկսէր աշխատել:

Ահա այս նոր սերունդն է որ 1876ին ամբողջ Հայաստանի գաստիարակութիւնը իր վրայ առաւ: Երիտասարդները կազմեցին երեք ընկերութիւն Հայաստանի մէջ ուսում տարածելու նպատակաւ: Արարատեանը, Դպրոցասիրաց-Արեւելեանը, Կիլիկեանը: Երիտասարդուհիները երկու ընկերութիւն՝ Ազգանուէր Հայուհեացը եւ Դպրոցասէր Տիկնանցը:

Ընդարձակօրէն միայն Արարատեանին վրայ պիտի խօսիմ, բնականաբար ծայրայեղ զգուշաւորութեամբ: Բան

մը չկայ որ հիմնաւոր կասկածներու տեղի տայ, եւ սակայն ինչ որ քսան տարի առաջ ամենաբնական երեւելոյթ մը կը համարուէր, հիմա ոճիր մը կը նկատուի: Արարատեանին հիմնադիրներէն ու վարիչներէն մէկը եղած ըլլալով ամէն մանրամասնութեանց տեղեակ եմ. ուստի ե զիտակցօրէն կրնամ գրել: Միւս շորս ընկերութեանց վրայ ընդհանուր տեղեկութիւններ միայն ունիմ. ե շատ փափաքելի է որ անոնց հիմնադիրներէն ու վարիչներէն արտասահման գանուողները իրենց յիշատակները հրատարակեն, ներուած սահմաններու մէջ. Նոր-Կեանքը սիրով պիտի հիւրընկալէ այդ նիւթին վերաբերեալ յօդուածները:



Արարատեան ընկերութիւնը Հայաստանի կրթութեան նպատած ատեն նաեւ գաղափարներու ե զգացումներու միութեան ամուր կապը եղաւ Ռուսիոյ եւ Թիւրքիոյ Հայոց միջեւ. ուստի ե այս տեսութեամբ ալ անոր պատմութիւնը կարեւորութիւն ունի ազգային ընդհանուր մտաւորական շարժումին պատմութեանը համար:

Սակայն Արարատեանին ծագումը փնտոելու համար պէտք է 1876 թուականէն ետ դառնալ, եւ աւելի հին յիշատակներ պրպտել:

Ինչպէս Կ. Պոլսոյ բոլոր վարժարաններուն, նոյն եւ Օրթոդոքս սրբոց Թարգմանչաց վարժարանին մէջ ալ մենք տղաքներս ընկերութիւն կազմելու անգուսպ եռանդը ունէինք: «Սանուց ընկերութիւն Սրբոց Թարգմանչաց վարժարանի» անունով ընկերութիւն մը կազմեցինք 1864 յայտի 24ին, նպատակ դնելով՝ Օրթոդոքս պանդուխտներուն կիրակի օրերը դաս տալ: Ուսումն սրանին կառավարիչը հանդուցեալ Կարապետ Չիզմէճեան այդ գաղափարը տուաւ մեզի: Ընկերութեան հիմնադիրները ամենքս ալ 10էն 12 տարեկան տղաքներ էինք, հազիւ թէ չորս հինգ մեծ կային մէջերնս 15էն 16 տարեկան: Դպրոցին հոգաբարձունքէն Պ. Մկրտիչ Ճանքմեան կը հովանաւորէր մեզի: Սկսանք աշխատիլ, ամէն կիրակի օր եւ ամէն հինգշաբթի զիշեր պարօցն էինք, ու երեսունի չափ բեռնակիր, չրկիր, սպասաւոր կուղային մենէ բան սորվիլ: Շատ կիրակի, շատ հինգշաբթի զիշեր մեզի հետ կ'ըլլար, մեզի կ'աշխատակցէր ծաղկոցին կառավարիչը, Պր. Սիմոն, յետոյ՝ Մատթէոս Պատրիարք Իզմիրլեան: Տարի մը ետքը Պոլսոյ մեծ քոլերան ցիրուցան ըրաւ պղտիկ վարակեաներն ու մեծ աշակերտները: Յետոյ նորէն հաւաքուեցանք, նորէն շարունակեցինք: Բայց ժամանակը հասած էր ասպարէզ մտնելու, ընկերներս տարտղնեցան, գործի մտան, ու ես ալ վճենտիկ Ռափայէկեան վարժարանը գացի 1867ի սկիզբները: Վերադառնալով 1870ին Պոլիս, կը գտնէի նախկին ընկերներէս ոմանք որ կը պահպանէին ընկերութիւնը, բայց ոչ նոյն նպատակաւ: Ուղղակի չմիջամտեցի. հիմա կը զգայի թէ գործելէ առաջ պեռ շատ բան սորվելու, խորհելու պէտք ունէի: Քանի մը տարի ետքը ինքզինքս բաւական պատրաստուած զգացի հանրա-

յին կեանքի սկզբնաւորութեան համար:

Սանուց ընկերութեան մէջ եռանդուն պատանի մը կար, Վանի Ալիւր գեղէն, Չաքար Համբարձումեան աւանուով. մտացի էր, ու ամբողջ խանդ ու եռանդ. սկսանք մէկտեղ խորհիլ Հայաստանի զարգացումին նպատակով: Չոցներուն վրայ: Ինքն յանձնառու եղաւ թողուլ Պոլիս իր պաշտօնները — ուսուցիչ էր վարժարաններու մէջ — եւ Վան երթալով Ալիւր գեղէն սկսիլ Վասպուրականի համար նոր կրթութեան մը հիմնարկութիւնը: Համբարձումեան 1873ին մեկնեցաւ, վստահանալով իմ վրաս: Ես պիտի վերակազմէի Սանուց ընկերութիւնը եւ անոր միջոցաւ Վան օգնութիւն պիտի հասցնէի: Սակայն շատ չանցած տեսայ թէ նախկին տարրերով կարելի պիտի չըլլար մեծ ապագայ խոստացող գործի մը ձեռնարկել: Նոր կազմակերպութիւն պէտք էր, նոր մարդիկ ալ գտնելու էր, առնելով Սանուց ընկերութեան ինչ որ կրնար օգտակար ըլլալ: Կը շարունակէի բարեկամներու աջակցութեամբ նպատակ Չաքար Համբարձումեանին, եւ միւս կողմէն կը խորհէի նոր ընկերութեան մը հիմնարկութեան վրայ:

Ռափայէկեան վարժարանէն զտրոցակից Օրթոդոքս երկու երիտասարդի հետ յաճախ կը տեսնուէի. երկուքն ալ, կաթողիկէ Հայեր, լաւ կրթուած էին, խանգալաւ էին, եւ գործունեայ: Միասին առաջին խորհրդակցութիւնները ըրինք, եւ որոշեցինք որ մեր երեքին միաձայն հաւանութեամբ անոնք չորրորդ մը, չորսին միաձայն հաւանութեամբ հինգերորդ մը, եւ այսպէս շարունակաբար: Սանուց ընկերութեան իմ ընկերներէս առինք չորրորդ մը, սակայն հինգերորդին համար կանգ առինք. կամաց կամաց պէտք էր յառաջանալ, եւ միշտ փնտոելու էինք նպատակին յարմար մարդը:

Քանի մը տարիէ ի վեր Կ. Պոլիս շատ կը խօսուէր հրապարակազրի մը վրայ, որ յեղափոխականի համբաւ ստացած էր: Եւսկիս ուսուցիչ եղած ու շղթայակապ բանտարկուած էր: Պոլիս Ասիան հրատարակած էր, գոր Ներսէս սպարեարք, թունդ պահպանողական եւ թրքամոլ այն ատեն, շնչել տուած էր: Հիմա Ասիայի խմբադիրը Փանոսեան վարժարանը ապաստանած էր իբր գասատու: Հետաքրքիր էի տեսնել այդ երիտասարդը. Փանոսեան վարժարանի իր մէկ պաշտօնակցին փափաքս յայտնեցի: Խոստացաւ զիշեր մը զինքը Օրթոդոքս հրաւիրել: Որոշեալ օրը զիշերը ելայ գացի: Ճաշը լիմնալէն վերջը եկան սենեակը ուր կը սպասէի: Մանօթներու հետ անձանօթներ ալ կային:

— Փորթոդոքսները չեկա՞ւ, հարցուցի տանաւր երիտասարդին:

— Ինչպէս չէ, հոս է, ահա:

Գամուած տեղս մնացի. կրակոտ, յաղթանդամ, գոռացող ոչ ոք կար: Նիհար, կարճահասակ, ուռած կուպիճներով, խարտեաշ, գառունկի նման մէկը գէմ էր իբր Փորթոդոքսեան: Թիւրք կառավարութիւնը, Ներսէս պատրիարքը ահաբեկողը ան էր:

Սկսանք խօսակցիլ ասդիէն անդիէն . բայց սրչափ խօսակցութիւնը կը յառաջանար այնքան աւելի կը համակրէի փորձագայեանին : Մտածելու եղանակը ուրիշներէն տարբեր էր : Ամուր, պինդ մէկը կը տեսնէի, յստակ համոզումներու, որոշ զաղափարներու տէր : Երկաթի պէս մէկը երեւցաւ ինձի . զգացի թէ այդպիսի նկարագրի տէր անձերով է որ կարելի պիտի ըլլար զօրեղ զործեր ընել : Առանձինն տեսակցութեան մը համար ժամադրութիւն խնդրեցի : Քանի մը օր վերջը իրիկուան դէմ զացի դտայ զինքը Ղալաթիա փանոսեան վարժարանը, ու մէկտեղ երկնցանք թօփհանէ : Թնդանօթներու շարքին առջեւ երկու ժամ պտտելով երկարօրէն խօսեցանք թէ ի՞նչ կարելի էր ընել Հայաստանի համար : « Էն քիչը, ըսի, քսանը հինգ տարի պէտք է աշխատինք որպէս զի Հայաստանի մէջ մեր փափաքած երիտասարդութիւնը պատրաստենք : » Խօսեցանք մեր կազմելիք ընկերութեան վրայ . Պ. Փորթուզալեան յանձն առաւ անդամակցիլ մեզի : Միւս ընկերներու իմաց տուի, անոնք ալ հաւանեցան : Հիմա հինգ հոգի եղած էինք . շուտով առինք Ռափայելեան վարժարանին նախկին աշակերտներէն մէկն ալ : Վեց անգամ բաւական համարուեցաւ ընդհանուր ժողով զուսարելով ընկերութիւնը օրինաւորապէս կազմելու :

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

Փ Ո Ք Ի - Ա Ս Ի Ա

Բ

Այս յօդուածին առաջին մասին մէջ ընդհանուր կերպով ցոյց տուինք Փոքր-Ասիոյ պատմութեան երկու մեծ իրողութիւնները, — Հռոմէական կայսրութեան և հռոմէական քաղաքակրթութեան տիրապետութիւնը միջին դարուն, և ասոնց կատարեալ ջնջումը՝ թիւրքերուն ձեռքով : Բայց ատկից դուրս՝ Փոքր-Ասիոյ մէջ դեռ շատ բան կայ անոնց համար որոնք պատմութեան կը նային ո՛չ միայն անկից առնուելիք դասերուն, այլ նոյն ինքն իր Հեկանութեանը համար : Ոչ մէկ պատմութիւն այնքան լեցուն է յարափոփոխ միջազգայնորով, արշաւանքներով ու աշխարհակալութիւններով, ճակատամարտներով ու պաշարումներով, մարդերու և քաղաքներու հոշակաւոր անուններով, պատմութեան ամբողջ թատերաբեմովը և շքեղութեամբը, որքան Փոքր-Ասիոյ պատմութիւնը : Հազիւ թէ գտնուի զիւր մը որուն յիշատակ մը կապուած չըլլայ, զիս մը կամ հոսանք մը որ քերթուածի կամ պատմութեան մէջ հոշակուած չըլլայ, Դրախտի դետէն՝ Եփրատէն, և Ալիսէն, որուն անցքը հզօր կայսրութիւն մը քանդեց, մինչև ոսկեղէն Պակտուրը և փրփրոտ Սկամանգերը : Փոքր

Ասիոյ կը վերաբերի ամէն բան որ ամէնէն աւելի արժէք ունի սկզբնական յոյն կեանքին և մտածման համար, — ԸԶմիւնիացի Հոմերոսը, քերթողահայր, Միլետացի Թալէս, Հերակլետոս, Քսենոփոն, Դեմոկրիտ՝ առաջին իմաստասէրը, Հեկատէս աշխարհագիրը, Հալիկարնացի Հերոդոտոսը, հայր պատմութեան : Դարձեալ Փոքր-Ասիոյ մէջ կեդրոնացած է ինչ որ ամէնէն աւելի շահեկան է Քրիստոնէութեան սկզբնաւորութեան պատմութեանը մէջ : Կրնանք հետեւիլ Ս. Պօղոսի ճամբորդութիւններուն . Եփեսոսի մեծ թատրոնին մէջ, կը բաւէ որ աչքերնս զօցենք պահ մը՝ երեւակայութեամբ տեսնելու համար Դեմետրիոս արժամազործը, երբ որ քարեղէն մեծ պատուանդանէն կը ճառէր այդ նորեկին դէմ որ մեծ աստուծուհին պարտ ու պատշաճ յարգանքը արգիւլ կ'ուզէր, և լսելու համար մինչև սեպ ըլլաւ իրարու վրայ խոնուած զայրացած խումանին ցասկոտ մոնչիւնը : Կրնանք Ասիոյ եկեղեցիներուն աւերակներուն մէջ ման դալ, և զաղջ Լաուդիկէի բաղլին վրայ խօհրհրածել : Փոքր Ասիոյ կը վերաբերին Յովհաննէս Ոսկեբերան և Գրիգոր Նազիւնզացի, Եփեսոսի, Նիկիոյ և Քաղկեդոնի ժողովները, և Քրիստոնեայ եկեղեցին կատղեցնող հերձուածներուն կէտը : Տիւրիկէն (հիւսիսային արեւելեան Անատոլի) էր որ վասիլ Ա. յամառ Պաղիկեանները փոխադրեց Դանուբի եզերքը, ուրկից անոնց հերետիկոսութիւնները դէպի արեւմուտք յառաջացան՝ ետ դարձող խաչակիրներուն հետ, և սերմերը ցանեցին այն դժգոհութեան որ այնչափ անգամ ջնջուելէ յետոյ վերջ ի վերջոյ յաղթանակեց Բարեկարգութեամբ (Բողոքականութիւն) : Կիւրոսի օրերէն մինչև Իսլամահիմ փաշա, բանակ բանակի ետեւէ անցած են երկու աշխարհներու միջեւ գանուող այս կամուրջէն : Քսերքսես, Աղեքսանդր Մակեդոնացի, Պոմպէոս, Խոսրով, Ֆրեոտրիք Պարպարոսոս, Թիմուր, ահա մէկ քանիները այն առաջնորդներէն որոնց ահագին բանակները Փոքր-Ասիայէն անցան : Աւերակներու սիրողին համար չկայ երկիր մը որ Փոքր-Ասիոյ հետ կարենայ բաղադատուիլ : Պատմութեան մէն մի շրջան իր հետքերը ձգած է — Հեթական և Փոխական յիշատակարաններ, և նախապատմական Պտերիոյ, հոմերական Տրոյապոլի, յունական, լիւիական և հռոմէական անհամար քաղաքներու, բիւզանդական և հայկական եկեղեցիներու և բերդերու, սելճուքեան մզկիթներու և դպրոցներու աւերակներ : Եփեսոսի աւերակներուն մէջ տեղ մը կայ ուր նայուածքդ կը տարածուի մարմարի կոտորած կոյտերուն վրայ որոնք կը պատմեն քեզի Եփեսացիներուն Արտեմիսին անցած գացած փառքը, և ի պատիւ Ս. Յովհաննէսի Յուստինիանոսի կառուցած մեծ կաթողիկէին վրայ, որ դարերով ուխտազրնացութեան վայր մըն էր մինչև որ Թիմուրի ձեռքով քանդուեցաւ : Աջ կողմդ, բարձր սիւներու երկայն շարք մը, որուն վրայ կոտնկները բոյններին շինած են, ցոյց կուտայ Յուստինիանոսի երբեմնի ազուգային ուղղութիւնը, որ կառուցուեցաւ ջուր բերելու համար կաթողիկէին բոլորաբեր ճանդ ուռճացող նոր քաղքին, — այժմեան Այս

սուլուքը: Կաթուղիկէին ձախ կողմը սելճուքեան մըզ-
կիթ մը կայ, եւ անոր վրայ ծած բլուրին գագաթը՝
սելճուքեան մեծ ամրացի մը աւերակները կը գտնուին:
Այդ միմիակ տեսարանին մէջ՝ երկրին ամբողջ անցեալ
պատմութիւնը կը բովանդակուի: Կաթուղիկէին եւ ագու-
լային մէջտեղը լեցուցած է այսօր աղտոտ պզտիկ դիւզ
մը, մինչ Այալունի երկաթուղիի գծին մէկ պզտիկ կայա-
րանը՝ հնարաւոր ապագայ մը կը թելադրէ: Ու Եփեսոս
կործանած անհամար քաղաքներուն մէկն է միայն: Փոքր-
Ասիոյ աւերակները աշխարհիս ամէնէն հինները, ամէնէն
ճոխները, կամ ճարտարապետական տեսակէտով ամէնէն
զեղեցիկները չեն: Իրենց հրապոյրը՝ այն խորին տպա-
ւորութեանը մէջն է զոր մտքիդ վրայ կը թողու իրենց
շատութիւնը եւ արդի լքեալ վիճակը: Ամենուրեք, ուղեղը
կը պաշարուի այդ անցած գացած քաղաքակրթութեան
մեծութեամբը: 20,000 հանդիսական բովանդակող
թատրոններ, տաճարներ կամ եկեղեցիներ, մար-
զարաններ ու ագուղաներ, ժողովրդին ծախքովը կառուց-
ուած, ամէն բան կ'ապացուցանէ քաղաքային կեանքի
հրաշալի կորուստն ու փթթումը որ կը ծաղկէր հոն ուր այսօր
թիւրք թափառական հովիւներ միայն կ'այցելեն: Շատ
պարագայի մէջ ալ, Անատոլիոյ աւերակ քաղաքներուն
հրապոյրը իրենց զերբէն բնական զեղեցիութեան արդիւնքն
է: Այսպէս է, օրինակի համար, Հիերապոլիս, իր բնա-
կան հրաշալի ագուղաներով եւ ձիւնապատ դարաստան-
ներով, իր աւերակ բազմութեամբ ուրոնց սիւները եւ քան-
դակուած քարերը խոսն ի խոսն փռուած են լճա-
կին կապույտ խորութեանցը մէջ ուսից կը բղիթ քա-
րացնող հոսանքը, իր գրեթէ կատարեալ թատրոնովը,
սիւներովը, եկեղեցիներովը, եւ դամբարանովը, — այս
ամենքը բարձր լեռան մը հարթավայրին վրայ, որ մեծա-
պանծ փառաւորութեամբ կը նայի Լիւկոսի լայն հովտին
վրայ, Պապա-Տաղի շոճեզարդ գահաւանդներէն եւ ձիւ-
նապսակ սեպածե կատարներէն անդին:

Տեսարաններու զեղեցիութեան եւ պէսպիսութեան
մասին շատ քիչ երկիր փոքր-Ասիան կը գերազանց է:
Միակ նշանակելի թերութիւն մը կայ, ու ան ալ մեծ դե-
տերու բացակայութիւնն է: Բացի Եփրատէն, որ արդէն
փոքր-Ասիոյ գետերուն չի վերաբերիր, Հոնոսի կամ
Էլպայի պէս գետ մը չկայ: Նոյն իսկ Ալիսը խեղճ հոսանք
մըն է, հակառակ իր 800 մղոն ոլորապտոյտ ընթացքին:
Բայց զեղեցիկ աղբիւրներ առատ են, խորունկ եւ ուժգին
բղիթով կրաքարի լեռներէ, ինչպէս Մարսիասի հոսակա-
ւոր աղբիւրը Տիւնէյի մէջ: Նկարչագեղ լիճեր անպակաս
են, Իզնիքի լիճը, Պէյշէհիլի լիճը, լեռներով պարփակուած
Էյիբրտիլը. ամէնէն զեղեցիկը, Վանի լիճը, բուն Անա-
տոլիոյի սահմաններէն դուրս է: Բայց Անատոլիոյ տեսա-
րաններուն բուն հրապոյրը կը կազմեն ծովեզերքին մըզ-
տափփոխ ծիրը, գետերու բերրի հովիտները, լեռները,
մերթ լեռի, ու մերթ շոճի, կաղնիի կամ մայրիի ուռճա-
լիւր անտառներով սքնուած: Շատ քիչ հաճոյք կրնայ հա-
ւասարիչ ձիւով ճամբորդութեան մը հաճոյքին՝ դաշտերուն

գրեթէ արեւադարձային ծառաստաններէն ու պարտէզնե-
րէն զէպի մենաւոր հովիտը լեռնային առատահոս աղ-
բիւրի մը, որ կանանչ արտօրաներու մէջէ կը վազէ, ու-
ռիններու եւ եղենիներու խիտ պուրակներով եզերուած. յե-
տոյ բարձրանալ ցանուցիւր շոճիներով ծածկուած աղբի-
ւներէ, կամ վայրի գահալէժ կիրճերու մէջէ մինչեւ լեռնա-
կատարը, ուր աչքիդ դիմաց կը պարզուի անվերջ յաջոր-
դութիւն մը թաւալուն լեռնաշղթաներու, ոմանք խիտ ան-
տառներով ծածկուած, ոմանք չոր ու լեռի, ուրիշ-
ներ ալ ձիւնին ճերմակութեամբը ակնախտիդ: Յետոյ,
լարձուն ժայռերէ, որոնց վրայէն Անատոլիոյ մտրուկ մը
միայն կրնայ անցնիլ անփոյթ անտարբեր, իջնալ յաւթի
գաշտ մը, անցնիլ ցանկերէ՝ որոնք անգլխականներուն կը
հաւասարին գրեթէ, խնձորի պարտէզներէ եւ դարիի ար-
տերէ, ու վերջապէս կանգ առնել մոռցուած քաղքի մը ա-
ւերակներուն մէջ: Գեղեցիկ են նաեւ թիւրքական շատ մը
քաղաքներ՝ իրենց գորշ տանիքներով եւ անհամար ճեր-
մակ մինարէներով որոնք կանանչ ծառերու մէջտեղ բու-
նած են, բարձրաբերձ լեռան մը ստորոտը, ուսից պաղ
ջրի առուններ կը հոսին քաղքին մէն մի թաղը: Այսպէս
Տէնիզի Պապա Տաղի ստորոտը. Ամասիա, Եէշիլ Ըրմաքի
խոր կիրճին մէջ, ճոխ ու բերրի պարտէզներով, իր հին
ամրոցովը պսակուած. Պրուսա, Ողիմպոսի կուշին վրայ,
իր հրաշալի կանանչ մզկիթով եւ դամբարաններով ուր կը
հանդէպ Օսմանեան կայսրութեան առաջին հիմնադիրնե-
րը, Օսման. Օրխան, Մուրատ՝ Քոսովայի յաղթականը,
Ելլաբըմ Պայազիտ, ու այդ մեծ աշխարհակալներուն
ու մարտիկներուն մէջտեղ, անբաղղ ձիւմ իշխանը, որ իր
եղբորը՝ Պայազիտ Բ.ի քովէն Հոսոս փախաւ, եւ շատ
տարի օտարութեան մէջ ապրելէ յետոյ, Աղեքսանդր Պա-
պին ձեռքով թունաւորուեցաւ:

Փոքր-Ասիոյ մէջ ճամբորդելը ինքնուրոյն հրապոյր
մը սնի: Նորագոյն ճամբորդներէն լորտ Ուորքուըթիզ իր
շահեկան զրբին մէջ կը հաստատէ այդ երկրին տարօ-
րինակ թուլութիւնը: Տեսարանները, աւերակները,
երկրին անցեալ կամ քաղաքական արդի կացու-
թիւնը, բացօթեայ զով կեանքը, երկրախուզութեան
հաճոյքը, կամ թիւրք պաշտօնեաներուն յարուցած զըժ-
ուարութիւններուն յաղթած ըլլալու գոհունակութիւնը չեն
միայն որ այդ թուլութիւնը յառաջ կը բերեն: Այդ ամէ-
թուն խառնուրդը կրուած, զգայութեանց լիութիւնը եւ պէս-
պիսութիւնը, ամէն բանի մէջ նորութեան գտումն է որ կը
կազմեն այդ հմայքը: Մարդ կրնայ ուրիշ երկիրներ ճամ-
բորդել որոշեալ նպատակով մը, եւ միտքը փակ պահել
անկից դուրս ամէն բանի: Բայց հոս ո՛չ ոք կրնայ ճամ-
բորդել եւ զուտ մասնագէտ մը մնալ: Հնագէտը՝ երկրա-
խոյզ մը, քաղաքագէտ մը արեւելագէտ մը, կ'ըլլայ: Դիւա-
նագիտութեան ամէն վարպետութիւնները ի գործ կը
գնէ՝ խաղաղեցնելու կամ ահաբեկելու համար կասկածոտ
զայմագամներ, եւ շուկայի ամէն հնարքները՝ գծկամակ
խանութպաններէ ձեռք բերելու համար իրենց գանձերը:
Քաղաքական բարենորոգումներու իր յատուկ ծրագիրը

ունի, եւ իր յատուկ տեսութիւնները՝ որուն համեմատ պաշտօնեաներուն մեծ մասը կախուելու արժանի են:

Լորտ Ուորքուրթի հիւսիսային Անատուլու Հայաստան, եւ վերին Միջագետք ճամբորդութեան զխաւոր նպատակը — բացի անկից որ ճամբորդելու հաճոյքը ինքնին նպատակ մըն էր — քաղաքական էր, եւ այդ երկիրներուն քաղաքական արդի կացութեան եւ անոնց ապագային նըկատմամբ իր հաւաքած տեղեկութիւններն են որ իր զբոսըն էն կարելու մասը կը կազմեն: Ասիական մասնաւորապէս կը պատշաճի Հայաստանի, որովհետեւ այս գիրքը ջարդերուն թուականն է ի վեր հայկական նահանգներուն կացութեանը նորագոյն նկարագրութիւնը կը բովանդակէ: Լորտ Ուորքուրթի թիրքական գործերը խորապէս ուսումնասիրած ըլլալու յաւակնութիւնը չունի, բայց պէտք եղած սրատեսութիւնը եւ դատողութիւնը ունի՝ զխաւոր դժերը որոշակի տեսնելու համար: Ամէն բանէ առաջ, բարոյնին անկողնակալ է: Իրաւ է որ ընդհանուր թիրք ժողովրդին համար զօրաւոր համակրանք մը ունի: Ու զանազան հատուածներ ցոյց կուտան թէ ինք տակաւին կը կարծէ որ Լորտ Պիքսոնֆիլտի քաղաքականութիւնը (թիրքիոյ մշտական նեցուկ ու աջակից ըլլալու) սխալ չէր, եւ թէ 1878ի անգլիական քաղաքականութիւնը ձախող արդիւնք ունեցաւ անոր համար որ հեղինակին ըմբռնած ոգիովը առաջ շտարուեցաւ: Բայց բնաւ փորձ չ'ընել անտես անցնելու թիրք վարչութեան ընդհանուր ապականութիւնը եւ ապիկարութիւնը, ոչ ալ թեթեւցնելու հայկական ջարդերուն անպատմելի արհաւիրքը: Ինք անոնցմէ չէ որոնք ինքզինքնին կը խաբեն սա հաւատքով թէ թիրքիան աղէկ պիտի քալէ՝ եթէ միայն Պետութիւնները զինքը հանդարտ ձգեն, եւ եթէ միայն Անգլիա սուլթանին տայ որչափ դրամ՝ որ կ'ուզէ իր վաղուց ծրարըւած բարենորոգումներուն համար: Լորտ Ուորքուրթի աներկբայ կը հաւատայ թիրքիոյ մէջ բարենորոգումներու կարելիութեանը, բայց Արեւելքի մէջ մեր քաղաքականութեան յուսահատեցուցիչ ձախողութեանը արհաւիրքն իսորապէս ազդուած է որ ալ չի թելադրեր թէ Անգլիա պարտի վերստին ձեռնարկել այդպիսի աշակցութեան մը, զոր Անգլիոյ երկու կուսակցութիւններուն ալ վերաբերող շատ մարդիկ համաձայնութեամբ մէկդի թողուլ որոշած են իբր անօգուտ: Ու այսպէս, ի հարկէ բռնադատեալ, Ռուսիոյ կողմէ դրաւուր խնդրին միակ եւ սնխուսափելի լուծումը կը նկատէ:

Թէ 1878էն ի վեր մեր Արեւելեան քաղաքականութիւնը՝ կատարեալ եւ նշանաւոր անյաջողութեան մը մասնուեցաւ, ասիկա ոչ ոք կրնայ ուրանալ, անաւանդ անոնք որ թիրքիան այցելած են վերջին մէկ քանի տարիներս: Բայց դատաստանները կրնան տարբերիլ թէ այդ անյաջողութեան յանցանքը մե՞րն էր, թէ ոչ հանդամանցներունը որոնք մեր ուժերէն զեր ի վեր էին: Բան մը ակնհայտ է, սա թէ Պիքսոնֆիլտի քաղաքականութիւնը, սխալ կամ ոչ, երբեք ճշմարիտ փորձարկութեան մը չենթարկուեցաւ: Այդ քաղաքականութեան նպատակն էր

Ասիական թիրքիան կատարելապէս անգլիական հսկողութեան տակ առնել, — անոր կառավարութիւնը բարուքել, բնական հարստութիւնները զարգացնել, եւ բանակը գործածել իբր պատուար մը՝ Հնդկաստանի վրայ ուսական յառաջխաղացութեան կարելիութեանը դէմ: Յանդուգն քաղաքականութիւն մըն էր ատիկա, ու յարասեւ ճիգ կը պահանջէր ու մեծ վտանգներ ունէր մէջը, նաեւ շատ ծանր պարտականութիւններ կը դնէր մեր վրայ: Եւ սակայն Կիպրոսի գաշնադրութեամբ ձեռք բերուած ազդեցութիւնը ասիական թիրքիոյ վրայ իրական թեւաբեկութեան մը վերածելու համար հարկ եղած ջանքերը երկար ատեն չհարուստուեցան: Չինուարական հիւպատոսները որոնք նոր քաղաքականութեան անկիւնաքարը կը կազմէին եւ որոնք քիչ ժամանակի մէջ ահագին ազդեցութիւն ձեռք բերած էին թիրքիոյ մէջ, Պ. Կլատտոնի կողմէ ետ կանչուեցան: Ատով, Կիպրոսի գաշնադրութեամբ հարկադրուած պարտականութիւնները (այսինքն Հայերուն պաշտպանութիւնը եւ բարենորոգումներու ներմուծումը) գործադրել տալու միակ իրական միջոցները կամովին մէկդի թողուեցան: Պարտականութիւնները այնպէս մնացին: Յաւալի ու անօգուտ գործ մը պիտի ըլլար 1893ի եւ 1896ի դէպքերուն քաղաքացիական ընել այս տեղ: Մէկ բան մը կար որ չըրինք — երբեք վայրկեան մը չուրացանք մեր պարտականութիւնը՝ պաշտպանելու թշուառ Հայերը: Չարդերուն պիտաց ոչ մէկ անգլիական կառավարութեան, որ պատասխանատու է անգլիական հանրային կարծիքին, կրնար համարձակիլ այդպիսի բան մը ընելու: Եւ սակայն մեր յանձն առած պաշտպանութիւնը գործադրելու համար մեր ըրած ջանքերը բացսորոշապէս ի գերեւ ելան: Հայկական ջարդերուն մեղքը մերը չէ, այդ մեղքը Ռուսիոյ վրայ կը ծանրանայ: Անոնք, որոնք լաւագոյն տեղեկութիւնները ունենալու վիճակին մէջ են, կը հաւատան թէ Ռուսիա կամովին քաջալերեց սուլթանին ջարդելու քաղաքականութիւնը, — Ռուսիոյ նպատակը ըլլալով ապագային Հայաստանի աւեր ըլլալ առանց հոն Հայ գտնուելու: Բնաւ տարակոյն չկայ — ապա թէ ոչ լորտ Ռուսիայի ինչո՞ւ ազատական կուսակցութեան առաջնորդութեան պիտի ազատական կուսակցութեան առաջնորդութեան պիտի հրաժարէր 1896 ի գարնան — թէ Ռուսիա բացէ ի բաց մեզի սպանացաւ պատերազմ հրատարակել, եթէ համարձակէինք մեր պարտականութիւնը կատարել եւ բռնութիւն գործել սուլթանին վրայ: Արեւան մեղքը Ռուսիոյ վրէժն է, բայց ամբողջ գործին ամօթը մեր վրայ մնաց: Եթէ բան մը կայ զոր Արեւելքին կրնայ կատարելապէս դնահատել եւ քամահարել, երկչոտութիւնն է: Եւ երբեք քեզիք քաղաքականութիւնը վարող իմբակը հաստատ համոզում գոյացուցած է թէ Անգլիացիները վատեր են, եւ պէտք է անոնց հետ վարուիլ այնպէս ինչպէս վատերուն արժանի է: Եւ, արդարեւ, Հայերը ազատելու մեր անյաջողութիւնը՝ կարծես մեր արեւելեան քաղաքականութեան բոլոր արիւնք ամօթ է: Թիրքիոյ մէջ բնակող Անգլիացի մը չկայ որ չըզանդատի այսօր թէ դրական անպատեհութիւն մըն է Անգլիացի ըլլալը, եւ թէ աւելորդ է անգլիական գետնա-

նասան պիմել՝ ճարտարագործական ձեռնարկի մը համար աջակցութիւն գտնելու կամ ակներեւ անարդարութեան մը դէմ իրաւունք ձեռք բերելու: 96 օգոստոսի ջարդերուն ատեն վնասուած անգլիացի վաճառականները խընդրապիւր խնդրագրի վրայ զրկեցին: Գիտպանատունը առջի օրէն ճշգրտեց եւ վաւերացուց անոնց պահանջումները, բայց անկից ի վեր երկուք ու կէս տարի անցած է, և Ապտիւլ Համիտ ամենազոյն ուշադրութիւն իսկ նուիրած չէ անգլիական կառավարութեան բողոքներուն:

Թէ մեր անշարժութեան այս արդիւնքէն նախընտրելի չէր եւրոպական մեծ պատերազմ մը զրգռելու կարելի վտանգը, ատիկա խնդիր մըն է զոր զատելու համար ամէնէն աւելի ձեռնհաս են քաղաքականութեան հետ ամէնէն աւելի սերտիւ կապուած անձերը: Աներկբայ, լորտ Բուպլերի եւ լորտ Սուզպլերի վտանգը շատ մեծ նկատեցին, եւ յանդիմութիւն պիտի ըլլար թեթեւօրէն հակաճառել անոնց միացեալ հեղինակութեանը: Այսու հանգրծ շատեր կան որ կը հաւատան թէ Ռուսիա ո՛չ կարող էր ո՛չ ալ պիտի ուզէր իր սպաննալըը ի գործ գնել: Պ. Վիլզոր Պէաթար, իր «Սուլթանին քաղաքականութիւնը» ճարտար գրքին մէջ, բարձր ուժովը այն կարծիքէն է թէ Անլիա իր դէմը դիւանագիտական բողոքներէն անպիմ բան պիտի չգտնէր, եւ թէ իր վարմունքովը՝ իր անկեղծութեան հոշակը բարձրացնելու և իր զիրքը զօրացնելու մէկ հատիկ առիթ մը կորսնցուց: Ռուրի տեսութեան մը նախելով, Վոսփորի մէջ խարսխած միակ զրահաւոր մը որ իր թնդանօթները Երլազ ֆէօշիի վրայ ուղղած ըլլար, Հայաստանի մէջ խաղաղութիւնը աւելի լաւ պիտի պահպանէր քան բարենորոգման ո և է ծրարիր: Նոյն իսկ Թիւրքերուն մէջ շատեր կային որոնք ուրախութեամբ պիտի սղջունէին մեր կողմէ ո և է գործ որ զիրենք քաջալերելը վերջ մը տալու այն անտանելի վատթար վարչութեան սրուն ենթարկած են Ապտիւլ Համիտ եւ պալատական խմբակը մի լրիւմաններն ու քրիստոնեաները հաւատարապէս: Բայց Անգլիացիները Եզիպտոսի մէջ եւ այլուր իրենց սենեցած փորձառութենէն ստրկած են որ եթէ զոյութիւն ունեցող իշխանութիւն մը վար առնեն, անոր տեղը բռնելիքին համար պատասխանատու կը գտնան, և Եւրոպա դժուար թէ յօժարէր թող տալու որ անգլիական ազդեցութիւնը — իր շարժառիթները ո՛րքան ալ սքանչելի ըլլային — իր ձեռքը առնէր բարեկարգեալ թիւրք կառավարութեան մը հաստատումը ի կ. Պոլիս:

Հարկ չկայ երկարօրէն ծանրանալ անցեալին վրայ: Շատ աւելի կարեւոր է ուշադրութեան առնել թէ ինչ պէտք է ըլլայ մեր քաղաքականութիւնը ապագային մէջ: Անգլիական ժողովուրդը այնչափ զբաղած է ուրիշ խնդիրներով, այնչափ զգուած ու վհատած է հայկական ջարդերուն առաջըր առնելու իր անյաջողութենէն, որ հիմակ որոշ քաղաքականութիւն մը չի պահանջեր Թիւրքիոյ հանդէպ: Բայց ուշ կամ կանուխ Արեւելեան խնդիրը նորէն պիտի բռնանայ մեր վրայ, եւ Թիւրքիոյ կամ՝ աւելի ճիշդը՝ Ասիական Թիւրքիոյ մէջ Անլիոյ առեւտրական եւ

քաղաքական շահերը այնչափ մեծ են որ չենք կրնար Թողուլ որ խնդիրը ուրիշներուն ձեռքով լուծուի ամբողջովին: Ռոշ կամ կանուխ, Եւրոպայէն դէպի Հնդկաստան զլիաւոր ճամբան Թիւրքիոյ և Պարսկաստանի մէջէն պիտի անցնի, եւ մեզի համար անկարելի է անտարբերութեամբ տեսնել ճակատագիրը այնպիսի երկիրներու որոնք այլքան ընդարձակ զարգացման մը տարրերը ունին իրենց մէջ եւ հաւանօրէն քաղաքական ու առեւտրական այնքան սերտ հաղորդակցութեան մէջ պիտի գտնուին մեր մեծ ստացուածքին հետ: Անշուշտ շատ հեռու ենք այն ժամանակէն ուր Պ. Մաք Գորն Ասիական Թիւրքիոյ «մեր նոր թեւարկութիւնը» կը յոր ջորջէր, կամ Կիպրոսի դաշնադրութեան հետեւանքներուն մասին ստակս կը խօսէր. եղածը եղած է, անգլիական շահերը հիմակ այնքան անզուհի կերպով կապուած են Փոքր-Ասիոյ հետ որքան նոյն ինքն Հնդկաստանի հետ: Այս խօսքերը ծիծաղելի կամ չափազանց չէին 1879ին, բայց այսօր տարօրինակ կը հնչեն: Եւ սակայն նոյն իսկ այսօր Ասիական Թիւրքիոյ բնական մեծ հարստութեանց զարգացումը, եւ մեր առեւտրական ու ճարտարագործական շահերուն համար — որոնք ուրիշ ո եւ է երկրի շահերէն անհունապէս աւելի մեծ են դեռ — «բաց դրան» պահպանումը մեր ծայրագոյն ուշադրութիւնը կը հայցէ: Անլիական արաածման եւ ներածման վաճառականութիւնը մի միայն իզմիրի հետ 2,500,000 ոսկիի կը հասնի: Անկարելի չէ նաեւ մտաբերել որ Թիւրքիոյ մէջ մեր ազդեցութիւնը կրնայ վերածնիլ վերջին տաղանակին հետեւանքէն: Գեպքերը երբեք շատ շուտ առաջ կ'երթան: Ապտիւլ Համիտ կրնայ մեռնիլ, կամ յեղափոխութիւն մը կրնայ գանի տապալել, եւ իրեն հետ մէկտեղ կրնայ յանկարծական վախճան մը գտնել այն եսասէր քաղաքականութիւնը զոր ինք ի գործ դրու:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ
ՀԱՅԵՐԸ ԵՒ ԻՍԼԱՄՆԵՐԸ**

Էրզրումի անգլիական հիւպատոս Պ. Մ'կոտի, 1898 ին Էրզրումի անտեսական կացութեան մասին պատրաստած տեղեկագրին մէջ, կ'ըսէր (1).
«Նշաններ կան ցոյց տուող թէ վաճառականութիւնը, որ իսլամներուն ձեռքը անցած էր, նորէն քրիստոնեաներուն ձեռքը անցնելու վրայ է:»

Մեզի համար խիստ շահեկան էր անգլիական հիւպատոսներուն նախորդ տեղեկագրիներուն մէջ փնտռել

(1) Տես «Նոր Կեանք» մայիս 15:

ձագուժը եւ ընթացքը այն կերպարանափոխութեան որով
Հայերը անտեսական հրապարակին վրայ իսլամին առ-
ջեւ պահ ժը բոնի տեղի տալէ յետոյ, քիչ քիչ նորէն ձեռք
կը բերին իրենց անտեսական գերազանցութիւնը, յա-
մասութեամբ եւ խելքով:

Դրապարար անգլիացի հիւպատոսները ամենուրեք
նշանակած չեն այդ իրողութեան զանազան շրջանները:
Ինչ որ սակայն զէս ու զէն կը դանենք իրենց տեղեկա-
զիրներուն մէջ, կրնայ բազմապատկան գաղափար ժը տալ
Հայաստանի ամէն կողմը պատահած նմանօրինակ երե-
ւոյթներուն վրայ:

Էրզրումի հիւպատոս Պ. Կրէյվը, 97ի մասին խօ-
սելով, կ'ըսէր թէ «վաճառականութիւնը մեծ մասամբ
քրիստոնեաներէն իսլամներուն ձեռքը անցած է:» Ինչպէս
ըսինք, 98ին այդ կացութեան փոփոխութեան նշանները
սկսած են երեւնալ:

Խարբերդի կացութիւնը 97ին հետեւեալն էր. «Այս
նահանգին առեւտուրը 97ին քիչ շատ վերակենդանացաւ:
Թիւրք վաճառականներ հիմակ յաջորդած են բազմաթիւ
հայ վաճառականներուն որոնց զրամագլուխը փճացաւ
խոսովութեանց ատեն եւ որոնց ձեռքն էր զխաւորաբար
Մամուրէթ-իւ-Ազիզի վաճառականութիւնը: Այս երե-
ւոյթը շատ ակնբեր է Խարբերդ եւ Մալաթիա, որոնք
նահանգին առեւտրական զխաւոր կեդրոններն են: Արար-
կիլի մէջ միայն Հայոց գործերը շատ բանուկ են, շնոր-
հի ստայնանկութեան որ 18 ամիս առաջ այստեղ վե-
րականցնեցաւ անգլիական նպաստի զրամով: Դուրսէն
բերուած մանած ու տէգիեհա ինամքով բաժնուեցան, եւ
արհեստը սքանչելի կերպով վերսկսաւ ընդ հսկողութեամբ
Խարբերդի ամերիկեան միսիոնարութեան նախագահ Տր.
Կէյլսի որուն յանձնուած էր չքաւոր Հայերուն ի նպաստ
Անգլիոյ մէջ հաւաքուած գումարներուն բաշխուժը այս
տեղ: Պ. Կէյլսի անյողողզ յարատեւութեան եւ խելա-
ցի մատակարարութեան շնորհիւ, այդ գումարները,
չքաւորներուն անմիջական պէտքերը հոգալէ զատ, բաւա-
կան եղան Արարկիլի, Մալաթիոյ, Խարբերդի գիւղերուն
մէջ եւ այլուր բանգուած հարիւրաւոր տուներ վերաշինե-
լու: Արարկիլի մէջ ստայնանկութիւնը արագօրէն ա-
ռաջ երթալու վրայ է, եւ ամէն պատճառ կայ յուսալու
թէ քաղքին հայ բնակիչները երկու երեք տարին մեծա-
պէս պիտի զարմանեն ջարդերուն բերած աւերները:
Նմանօրինակ ճարտարագործութիւն ժը Ակն մտցուած է
Հայաստանի Բարեկամներուն ընկերութեան ձեռքով,
տնանկ ու անոց որքեւարիներուն միջոց տալու համար որ
իրենց եւ իրենց զաւակներուն ապրուստը ճարեն, եւ լաւ
յաջողութիւն ժը կը յուսացուի: — Բացի Արարկիլէն
սակայն, առեւտուրը զեռ զարգած է նահանգին ամբողջ-
քրիստոնեաներուն մէջ. եւ Ակն, Չմշկածաղ, Խողաթ,
Ատեւաման եւ Չարսանձաղ, թէ՛ քրիստոնեայ թէ՛ թիւրք
« եւ է գործ ըրած շունին:»

Խարբերդի 98ի տեղեկագրին մէջ հիւպատոսը « եւ է
տեղեկութիւն շի տար Հայերուն եւ իսլամներուն փոխա-

յարձ զիրքին մասին առեւտրական հրապարակին վրայ:

97ին Բաղէշի կացութիւնը հետեւեալն էր. «Բաղէշ
քաղաքը իբր 30,000 բնակիչ ունի, երկու երրորդը քիւրա
եւ մէկ երրորդը հայ: Բաղէշ առեւտրական կեդրոն մըն է,
որովհետեւ ապրանքները կուգան հոս կը կեդրոնանան եւ
ասկից կը զրկուին նահանգին միւս կողմերը, բացի Սղեր-
զէն եւ Մուշէն որոնք նահանգին երկու միւս քաղաքներն
են: Բաղէշ քաղքին մէջ, մեծաքանակ ներածող հայ վա-
ճառականներուն թիւը 10 է, իսկ իսլամներուն՝ 12, ո-
րոնք միջին հաշուով Հայերէն քիչ ժը աւելի հարուստ կը
կարծուին: 1895ի ջարդերէն առաջ, մեծաքանակ ներա-
ծող 13-14 հայ վաճառական կար, ու հիմակուրէն պա-
կաս իսլամ. այդ թուականին բաղչատմամբ, իսլամ վա-
ճառականները հարստացած են եւ Հայերը աղքատ սցած:
Մեծաքանակ ներածողներուն զխաւոր ապրանքները իս-
ներու մէջ պահուած են, եւ ջարդերուն ատեն անոնց
ձեռք չպցուեցաւ: Շուկան, առանց հաշուելու 6 փուտ
եւ 30 մասվաճառանոց, իբր 500 պղտիկ խանութներ կը
բաղկանայ, որոնց կէսը նպարեղէն ու բէզրոյ կը ծախեն,
իսկ միւսները բամբակեղէն, լամպար, ամաններ, երկա-
թեղէն եւայլն: Նպարանոցները միշտ իսլամներուն ձեռ-
քը եղած են: Միւս խանութներուն մեծ մասը Հայերուն
ձեռքն էին ջարդերէն առաջ, բայց անկից ի վեր իսլամնե-
րը վարձած են եւ զրուած անոնց մեծ մասը: Հայե-
րը սակայն քիչ քիչ իրենց հին զիրքը ձեռք բերելու
վրայ են շուկային մէջ, ուր հիմակ 30 հայ խանութ կայ,
մինչդեռ 1896ին 12 հատ մնացած էր միայն: — Բաղա-
քին տուններուն զրեթէ մէկ երրորդը ապակիէ պատուհանը
ինչ է չեն գիտեր. իւզոտած թուղթ կը դորձածեն ապակիի
տեղ:»

98ի տեղեկագրիներուն մէջ Հայերուն եւ իսլամնե-
րուն այս առեւտրական մրցման մասին նոր տեղեկութիւն
մը չկայ: Բայց, ընդհանուր կերպով խօսելով, պատճառ
մը չկայ տարակուսելու թէ Խարբերդի, Մալաթիոյ, Բա-
ղէշի մէջ, ինչպէս Հայաստանի ամէն կողմը, Հայերը
հետզհետէ ձեռք բերելու վրայ են իրենց կորսնցուցած
անտեսական գերազանցութիւնը, ինչպէս կը հաստատու
Էրզրումի հիւպատոսը իր շրջանակին մէջ:

ԼԱՖՈՆԴԷՆ ԶԱՐԱՓՈՒԵԱԼ

ՉԳՋԻԿՆ ՈՒ ԵՐԿՈՒ ԱՔԻՄՆԵՐԸ

«Պատկանելի Դաշնակցութիւնդ»
Յարուշիւն Տատեաւն

«Վեհ. Սուլթանին բարի տրամադրութիւններն
առ հայ ազգն»
Յարուշիւն Տատեաւն

Վարչապետն Հայոց Յարութիւն Տատեան
Յեղափոխներու օր մ'իսկաւ ատեան,
Որ սալ ուզեցին սխերուն յազուրդ.
Խեղճին բանն էր բժուրդ:

— «Յեղափոխութեան զուն արիւնարբուն՝
Յանդըզին, բռին, գալ մինչև մեր բոյն.
Թէ արեանց յետին կաթիլ չը բամենք.
Այլ Դաշնակցական չը սեպուինք թող մենք:»

— «Առ քնչ զըրպարտանք,
Սէր իմ ազըրբտանք,

Չինէ եմ ձենէ, գոչեց Արթաքին,
Փա՛ռք Դըրոշակին,
Օ՛ն, կեցցէ տէնօր,
Բիւր տեսնէ գեռ օր:»

Աս երգուրնցածին
Ամենքն հաւատցին.
Պըրծաւ ձեռքերնուն
Սարսափով անհուն:
Վախին զողին տակ,

Մոլորուած ինկաւ Երլարդ շիփշխաակ:
Հոն ալ մեծ վրտանդ. սուլթանը գաման
Սպաննել ուզեց յեղափոխ փաշան:

— «Սատկին տեւօրը և՛ ակիտացիան,
Պոտոցոգներուն պըրոպակաստա՝
Չարդ պատուական տայ
Արքան մեծափառ:»
Գոչեց քաջարար,
Ու մնաց իր մօրթին
Մէջ վարպետորդին:

ԱՐԱՄ ՃԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

Սրանտարտի Կ. Պոլսոյ թղթակցէն.

Հետեւեալ նամակը ստացայ անձէ մը որ ստոյգ տեղեկութիւններ ունենալու զիրքին մէջն է.

«Վերջերս չգրեցի ձեզի, որպէս զի կարող ըլլամ տիրող կացութեան վրայ անելի ընդարձակ ու լիուրի գաղափար մը տալ ձեզի: Գարնան ձեզի կը գրէի թէ անիշխանական վիճակ մը կը տիրէր գաւառները, մասնաւորապէս վանի, Բաղէշի եւ Էրզրումի նահանգներուն մէջ, եւ սովակ հետեւանք էր զլիաւորաբար կուսակալներուն ապիկարութեանը, եւ կառավարութեան մերժումին՝ զանոնք հրաժարեցնելու. միանգամայն կը գուշակէի թէ շատ չանցած նորէն արիւն պիտի հոսէր: Հիմակ ահա արիւնալի կոտորածներ տեղի ունեցան Մուշ, Սասունի մէջ ալ նորէն՝ նուազ ծանր դէպքեր, ու քրիստոնեայ գեղեր աւերուեցան Էրզրումի եւ Բաղէշի շրջակայքը: Մուշի եւ Սասունի դէպքերուն մասին տեղեկութիւններ կը հասնին հետզհետէ. բայց Էրզրումի մասին դեռ որոշ լուր չկայ:»

«Դուրը սովորական պատասխանը կուտայ. «Յեղափոխականներուն գործն է ատիկա, բայց, ընդհանրապէս, պաշտօնի բարտուղարներն Ք.ի կը վերագրուի:» Յայտնի իրողութիւն մըն է թէ Բաղէշի կուսակալ Մէճիտ էֆէնտի իր պաշտօնը ստանձնելէ առաջ գաղտնի երկար տեսակցութիւններ ունեցաւ այդ Ք.ին հետ, որ ամբողջ ապրիլ ամսուն անոր հետ ծածկաղիր հեռագրեր կը փոխանակէր անոր: Երբ գեղականները զիտուութիւն կ'ընէն, իրենց յիշեցնել կը տրուի իրենց կրկնակի խոստումները թէ երկրին ներքին գործերուն պիտի չմիջամտէին, եւ իրենց հաւատարմը կը տրուի թէ ամէն կարելի միջոց ձեռք առնուած է՝ խաղաղութիւնը ապահովելու համար: Վերջին օրերս, վանի եւ Բաղէշի սուսական կանգլիական գեր-հիւպատոսներուն «թոյլտուութիւն» եղաւ քննութիւն մը կատարելու, բայց պայմանով որ ատիկա պաշտօնական ս եւ է հանգամանք պիտի չունենայ, միտիւլմաններուն զիրազգածութիւնը չզրգուելու համար:

«Տեղական մամուլը ծանուց թէ Մուշի կառավարիչը պաշտօնանկ եղած եւ ձերբակալուած է. բայց իրողութիւնը սա է թէ այդ պաշտօնակալը բան մը չըրաւ քրիստոնեաներուն դէմ, քանի որ կոտորածէն երկու օր առաջ հրաժարեցուցուած էր Բաղէշի կուսակալին կողմէ, առանց Դրան իմացնելու: Կառավարչի փոխանորդին անուանմանը յաջորդ օրն էր որ կոտորածը տեղի ունեցաւ: Այս իրողութիւնները նոյն իսկ պատճառ եղան որ Դուրը բողոք բաժնայ եւ պահանջէ կուսակալին պաշտօնանկութիւնը, որ սակայն անստան կը մնայ իր պաշտօնին գլուխը:»

Առանց յիշեալ նամակին ճշգրտութիւնը երաշխաւորելու, կարելի է արդարօրէն ըսել թէ Հայաստանի վերջին դէպքերուն մասին ճշմարտութիւնը հասկնալու ո եւ է ջանք:

չկայ, եւ թէ մինչեւ հիմակ պատասխանատուութիւնները փնտուռած ու որոշուած չեն. միւս կողմէ այս կացութիւնը մեծ ահուզող կը պատճառէ քրիստոնեայ բնակիչներուն:

Նոյն թղթակցէն .

Հետզհետէ հասնող տեղեկութիւնները անդուզ կը նկարագրեն Փոքր-Ասիոյ մէջ տիրող անհուն թշուառութիւնը եւ վատթար վարչութիւնը. բայց ասիկա թիւրքիոյ արդի քաղաքական, տնտեսական եւ ելմտական ընդհանուր վիճակն է: Ոչ ոք կրնայ ըսել թէ Հայերը հիմակ առաջուրնէ աւելի թշուառ են, կամ թէ իրենց կացութիւնը աւելի դէժէ քան կրետացի գաղթականներունը, որոնցմէ 50,000 հոգի կղզիէն մեկնելու վրայ են: Այս պահուս Էրսոպա այնչափ զբաղած է ուրիշ գործերով որ թիւրքիոյ վրայ խորհելու ժամանակ չունի, ու ասկից առաջ եղած միջամտութեանց արդիւնքը այնքան անզոհացուցիչ էր որ նորէն ու նորէն այդ կարգի դիտողութիւններ ընելու չի խրախուսեր, — դիտողութիւններ որոնք առնուա մնալու զատապարտուած են, քանի որ անոնց չընկերանար ո եւ է որոշ մտադրութիւն պնդելու որ իրաց արդի կացութեան մէջ բարւոքում մը մտցուի:

Կովկասի հայ գաղթականներուն ճակատագիրը առկա կը մնայ: Այդ մասին Վիէնայէն հետեւեալը կը գրեն անգլիական թերթերուն.

«Կովկասի հայ գաղթականներուն վերադարձի խընդիրը, Բաշիլէի Գորեսթանեկցի խօսքին նայելով, հաւանական է որ լուծում մը գտնէ, ըստ որում կ'ըսուի թէ Ռուսիա կը յօժարի որ անոնց մէկ մասը առ այժմ ոռւկայութեան մէջ տեղաւորուի: Այս հաշտարար տրամադրութեան հետեւանքով, սահմանազրխին վրայ թիւրք զօրքերուն շղթային մտադրուած յաւելումը առ այժմ յետաձգուած է: Ինչ որ ալ ըլլայ սակայն, անհրաժեշտ է վերջ մը գնել ֆիւրտերուն շահատակութեանցը, որովհետեւ մինչեւ որ բարեկարգութիւնը չվերահաստատուի, զարձու գաղթականներուն կեանքը վտանգի մէջ պիտի ըլլայ:»

Կ. Պոլսէն կը գրեն մեզ.

«Անատոլուի մէջ կացութիւնը երթալով կը ծանրանայ: Մուշի կոտորածէն յետոյ, ահա լուր կը հասնի թէ Համիտիէ ֆիւրտերը կ'իյննի գաւառին մէջ չորս հինգ գիւղ գարկեր ու մասամբ ջարդեր են:»

Վանէն Տր. Բէյնուլուզ կը գրէ մայիս 20 եւ 27 թուականով թէ կացութիւնը քիչ մը բարւոքած է, որովհետեւ տեղացած առատ անձրեւները լաւ հունձքի մը յոյսը կուտան: «Գիւղացիներուն երեք չորրորդը սակայն ուրիշ

անունը չունին բայց եթէ իրենց քաղած արմատները ու բանջարեղէնները, կամ ինչ որ զբէն կը բերուի իբր նպաստ: Ըստ որում դեռ երկու ամիս կայ հունձքին, վախ կայ որ շատեր պիտի մեռնին: Անգլիայէն զրկուած ստակը շատ քիչերուն կը բաւէ:» Տր. Բէյնուլուզ մտադիր է արհեստագործական ճիւղ մը հաստատել Շատախ, Վանի հարաւակողմի լեռներուն մէջ, ուր ժողովուրդը ոգի ի բռին կ'աշխատի ապրուստը հանելու: Էնկիւրիի այժի թիֆթիքէ կերպաս պատրաստելով: Հիմակ 500 տղայ կայ Վանի որբանոցներուն մէջ:

Ժ Ա Մ Ա Ն Յ

ՆԱԽԱԽՆԱՄԱԿԱՆ ՀՈՆԴԻՊՈՒՄԸ

Այս՝ նոյն ինքն էր, ատոր սարակոյս չունէի. ու կողմնակի փողոցէ մը աներեւութանալու ժամանակ չկար. րոպէ մըն ալ եւ ահա դէմադէմ պիտի գտնուէինք: Գրասեղանին առջեւ միս մինակ, զրիչը ձեռքերնիս, հեշտ է խտասիրտ հրապարակագիր հանդիսանալ. բայց երբ կը տեսնենք անոնք որոնց բարեմտութիւնը պատրելով անհատական խօսակցութիւն մը հրապարակելու զեղծուր գործած ենք, խղճերնիս մեղի կը տանջէ վայրկենաբար, ու պահ մը վարանստ կը մնանք: Ինքն էր, իրգիտօփը, որուն հանդիպեր էի Մարտէյլէն Բարիզ տանող շոգեկառքին մէջ: Կանգ առաւ դէմս, թեթեւ ժպիտով մը գլուխը դէպի ձախ հակեց, ու երկու բունցքը խուփ, շիփ շիտակ երեսս նայեցաւ.

- Դուք ինձ ճանաչո՞ւմ էք, պարոն, հարցուց:
- Ի՞նչպէս չէ:
- Չէ՛ք սպասում ինձ այս տեղ տեսնել:
- Ո՛չ, պարոն:
- Ես եկել եմ ձեզ եւ ձեր նմաններին համար:
- Պատրաստ եմ, պարոն ձեզ ընդունիլ, բո՛ւ ամփոփելով ընդդիմադրութեանս ուժը:
- Բայց ան աջ ձեռքը լայնկէկ բանալով ինձի երկնցուց ու
- Մենք այժմ բարեկամներ ենք, ըսաւ:
- Պարո՛ն, շարունակեց, ձեզ հաւատացնում եմ որ յեղափոխական գործին մի նշանաւոր ծառայութիւն մատուցիք, այնքան ուղիղ բացատրելով վագօնում մեր խօսակցութիւնը: Դուք թըրքահայերին լաւ հասկացրիք այն բոլորը ինչ որ մենք կամենում էինք ստել: Այժմ ձեզնից ինչորում եմ, պարոն, ձեր ծառայութիւնները շարունակէք մեզ մատուցանել:
- Ձեր տրամադրութեան ներքեւ եմ, պարոն:
- Եթէ այդպէս է, գնանք ուրե՛նք բիրա կոնձիլ:
- Ողբից ըմպելիք չեմ գործածեր, պարոն:
- Ախր, պարոն, այդպէս յեղափոխական չի՛ լինի. ես

ձեզ խոստացել եմ՝ ձեզ յեղափոխական շինել: Մենք ժընկելում եթէ սաղ օրը բիրա չլինենք, յեղափոխական ոչինչ չենք կարող շինել:

Պատ մը մտնելով անկիւն մը տեղաւորուեցանք: Իզիօգօֆ երկու սիկառ հանեց, մէկը ինծի հրամցուց:

—Ներողութիւն, պարոն, չեմ ծխեր:

—Ախ, ես յիշում եմ: Բայց, եղբայր սիրելի, էլ պէս յեղափոխական չը լինի. դուք պէտք է վարժուէք մեզ նման հուրի եւ ծուխի հետ սովորել: Պարոն, ես մի պիտի օրօգիական գիւտ եմ արել թրքահայերին կտրիճ յեղափոխականներ շինելու համար:

—Գաղանձք է ձեր գիւտը:

—Ո՛չ, ես ձեզ կ'առնեմ: Թրքահայերին պէտք է հէնց երախայ հասակից սովորեցնել բարբրոսի գործածութեան հետ: Երբ նրանք այնպէս փոքր են ու ծխում, նրանք միշտ հուրը իրանց բերանում կը տեսնեն, կրակը իրանց աչքերի առաջն է, և այնպէս կրակի հետ մեծանալով երբ տղամարդ կը դառնան, այլ ես ո՛չ հրացանից, ո՛չ թընդանօթից, ո՛չ էլ նրանց ծխիցը կը վախենան: Ես պէտք է այս աէօրիան պարզեմ մեր թերթերումը:

—Նշանաւոր ծառայութիւն մը պիտի մատուցանեք, պարոն, հայկական ազատութեան դատին, եւ հայ յեղափոխութեան:

—Չէ՛:

Ու անձանկի գոհունակութեան զգացումով մը շարունակեց.

—Այժմ, պարոն, մի քիչ էլ խօսիմ իմ միտայի վրայ. ես եկել եմ ձեզ եւ ձեր նման ուրիշներին համար. ես պէտք է ձեր ամենքին յեղափոխական շինեմ:

Ու գրպանէն թուղթ մը հանելով ինծի տուաւ. յեղափոխականացուններուն ցուցակն էր:

—Բայց, պարոն, ըսի, ասոնք ամենքն ալ այսպէս թէ այնպէս յեղափոխականներ են արդէն:

—Կրնան լինել:

—Ինչո՞ւ ձեր աշխատութիւնը չէք նուիրեր պահպանողականներէն, այսպէս ըսնեք, հոգի վատակելու: Անոնց մէ պէտք է հետզհետէ յեղափոխականներ պատրաստել:

—Ախ, պարոն, ինչ լաւ էք խօսում, ըսաւ ցաւազին ձայնով. բայց ինչ արած, այդ հաստազրուի պահպանողականներից ոչ մին չէ ուզում յեղափոխական դառնալ:

—Ուրեմն դուք ալ կ'ուզէք յեղափոխականները յեղափոխական շինել:

—Ճիշդ այդպէս, պարոն. մեր թերթերը տարածում ենք յեղափոխականների մէջ, նրանց ենք յեղափոխական շինում:

Բոպէ մը երազուն մնալէ յետոյ սթափեցայ եւ պատասխանեցի.

—Իրաւունք ունիք, պարոն, ամերիկացի միտինարներն ալ ատանկ կ'ընեն:

—Ի՞նչպէս կ'անեն, պարոն:

—Անոնք ալ Հայաստան կ'երթան քրիստոնեայ Հայերը քրիստոնեայ ընելու: Երբ իրենց կ'առարկուի թէ

խալաֆները ինչո՞ւ քրիստոնեայ չեն դարձնել, կը պատասխանեն թէ այդ հաստազրուի խալաֆները երբեք չեն ուզեր քրիստոնեայ ըլլալ, ուստի իրենք ալ կը պարտաւորուին քրիստոնեաները քրիստոնեայ ընել: Գրք մը պէտք է տեսնեն, այնպէս չէ՛:

—Անտարակոյս: Ուղիղ այդպէս է: Ախ, պարոն, ինչ շատ էլ գտնում էք մեզ արգարացնող փաստերը: Այո՛, ձեզ հետ մեր հանդիպումը նախախնամական մի բան էր: Այդ ամէնը պէտք է գրէք ինչպէս խօսում էք:

—Անշուշտ:

—Շնորհակալ ենք, պարոն, շնորհակալ: Այժմ խօսինք ուրիշ նիւթերի վերայ:

Պ. Իզիօգօֆ սկսաւ բացատրել թէ ասիէ ետքը ինչ ուզուածեամբ պիտի գործեն: Հասկցեր են թէ ամէն շարիք անդադանապահութեան պատճառաւ զխաւարապէս առաջ եկած է: Լրագիրներու մէջ առաջուց հրատարակելով թշնամիին դէմ գործելու խորհուրդները եւ յատակազիծները անոր աչքը բացեր ու անիկա՛ արթուն պահած են: Այլ եւս լուր գործելու ժամանակն է:

—Սուսիկ-բուսիկ գործելու քաղաքականութեան կը յարիք ուրեմն, պարոն:

—Այո՛, ճիշդ այդպէս. ինչ էլ լաւ բառ: Այո՛, պարոն, այսուհետեւ պէտք է բուսիկ բուսիկ գործել: Ախ, այդ շատախօսութիւնը մեր տունը քանդեց:

Խեղճ Իզիօգօֆը այս անցեալը յիշած ատեն այնքան ցաւած դէմք մը առաւ, որ մեղքցայ զինքը. անկեղճ զըղջացող մը կ'երեւար. մարդասիրական գործ մը ըրած պիտի ըլլայի զինքը միխթարելով, սրտսպնդելով: Եղա՛ր եղած էր, հիմա ապագային հարկ էր նայիլ: Ուստի քիչ մը վարպապետեցի:

—Շատ խղճահարութեամբ մի՛ տառապիք, պարոն, ըսի: Անցեալին անխոհեմութիւններուն համար շատ մեղադրելի չէք: Ամէն բան մէկ օրուան մէջ չի սորվուիր. յեղափոխութեան արուեստն ալ գիտութիւն մըն է որուն մէջ աստիճանաբար կարելի է յատաշանալ: Ըսուած է թէ փորձառութեանն աղաքները միայն չեն օգտուիր: Փա՛ռք Աստուծու, դուք հիմակ ալ տղայ չէք սեպուիր. հասուն խելքի տէր եղած ըլլա՛րու ապացոյցը կուտաք փորձառութեանն օգտուելու ձեր տրամադրութեամբը: Բաղթանակի զրաւական մեծ ճշմարտութիւն մը մտքերնուզ մէջ թափանցած ու տեղ ըրած է:

—Այո՛, պարոն, մենք այժմ լուր գործունէութիւն քարոզում ենք:

Պ. Իզիօգօֆ գրպանէն քանի մը թերթ հանեց, եւ անոնց մէջէն հատ մը ինծի երկնցնելով, տող մը մատնանիշ ըրաւ.

—Տեսնո՞ւմ էք, պարոն, տեսնո՞ւմ էք:

—Շիտակը, պարոն, բան մը չեմ տեսներ:

—Բայց երեք կէտերը:

Ու տուաւ թերթը որ ամբողջ յօդուածը կարգամ: Հայաստանը ընդհանուր ապստամբութեան մը պատրաստելու գաղտնի ծրագիրն էր: Ռազմայարգարը յատակա-

զծին զլիաւոր կէտերը կը պարզէր հետեւեալ կերպով: «Յեզափոխական կազմակերպութիւնը իր ուժերի շոր հինգերորդը, ինը տասերորդական բաժինը պէտք է գործադրէ բուն երկրի վրայ, միայն մի տասերորդը մայրաքաղաքում: Այդպէս պէտք է անել այսուհետեւ:» Նաեւ «կազմակերպուած պահել մայրաքաղաքը, խաղաղութեան սպաննացող վտուցարանի ամէնավտանգաւոր կէտը. եւ սպա առաջ տանիլ իր ներքին զործերը. կազմակերպութիւնը զօրացնել գաւառներում, զինել ժողովուրդը եւ վարժեցնել նրան տուած զէնքը գործածելու:» Ու այս ամենէն յետոյ. «Երբ բուն հայրենիքը կ'աննայ բաւական թուով զէնք ու այդ զէնքը արժանաւորսպէս գործածող դաւակներ՝ այն ժամանակ թող պայթի ամէն կողմից էլ...» Ռազմայայտարը խոհեմութիւն կը համարի միայն «...» ով իմացնել ինչ որ օր մը պիտի պայթի, «վասն զի գործնական խոհեմութիւնը թող չէ տալիս շատ էլ առաջ երթալու:»

— Տեսնում էք, պարոն, բաւ իգիտօգփ խորհրդաւոր շեշտով մը, մենք որքան ուստա ենք գտնել. երեք կէտով ամէն բան ասում ենք, բայց ոչինչ էլ չենք ասում: Մեզ պէտք է այսուհետեւ օպօռտունիստ ասեն, բայց Յեզափոխական համար մենք այդ նախատինքին տանում ենք:

— Այո՛, պարոն, շատ գործնական խոհեմներ էք. ամէն հայ պիտի հասկնայ թէ ի՞նչ կ'ուզէք ընել, միայն թիւրքերը բան մը պիտի չհասկնան: Թո՛ղ աս խեղճերը զլուխին ճաթեցնեն մարդարեւնալու համար թէ օր մը «...» ը ի՞նչ է որ պիտի պայթի:

- Չէ՞:
- Այո՛, միայն թէ կը կասկածիմ որ սուլթանը այդ ամէնը գուցէ մինչեւ հիմա իմացած ըլլայ:
- Բայց օր տեղաց, պարոն, մի՞թէ նա հայերէն գիտէ:
- Թարգմաններ չկան, պարոն:
- Ի՞նչ էք ասում. ես նրանց մի ահարեկիչ կ'ուզարկեմ:

Լրջութիւնս պահելու համար ճակատս երկու ավիս մէջ առի, խոր մտածութիւններու անձնատուր երեւնալով:

- Ի՞նչ էք մտածում, պարոն, հարցուց:
- Պարոն իգիտօգփ, ըսի յանկարծ սթափելով, կը խորհիմ թէ այնքան ալ զէջ պիտի չըլլայ գուցէ եթէ սուլթանը այդ ամէնը իմանայ:
- Խնդրեմ ձեր տեսութիւնները պարզէք:
- Պարզ ենթադրութիւններ են, պարոն:

Ինք պիտային գաւաթը չորրորդեց, ու ես համառօտաբար պարզեցի ենթադրութիւններս:

— Պարոն, ըսի, զիտէք թէ սուլթանը երեք ապագան իր հոգը չընէր. ան միայն ներկան կը տեսնէ. հայկական խնդիրը հիմա իրեն շատ մտահոգութիւն կը պատճառէ, վախնալով որ մօտ ժամանակներս այդ հարցը կըրնայ յուզուիլ. այժմ գուցէ ապագայ ապստամբութեան յատակագիծը պարզելով կը հաստատէք թէ «...» ը շատ ուշ կրնայ պայթիլ: Սուլթանը թէեւ կարող չէ գուշակել թէ

«...» ը ի՞նչ է որ պիտի պայթի, բայց պիտի համոզուի որ «...» ը տարիներ ետքը միայն կրնայ պայթիլ, ուրեմն ինչո՞ւ ինք նեղուի հիմա կուց: Ապահով եղիք, պարոն իգիտօգփ, որ սուլթանը Պալիս ստիկանութեան նախարարին պիտի հրամայէ թող տալ Հայոց, մինչև իսկ աջակցիլ Հայոց, մայրաքաղաքը կազմակերպուած պահելու համար: Նմանապէս դաւաճները կուտակալներուն հրաման պիտի խրկուի, Հայոց ամէն զիրութիւն ընծայել ապստամբական կազմակերպութեանց համար, եւ շատ հաւանական է որ թիւրք սպանները իրենք վարժեցնեն Հայերը զէնքի գործածութեան: Ինծի անանկ կուզայ որ սուլթանը պիտի ուզէ դադանապէս ինքն իր ձեռքն առնել հայկական ապստամբութեան պատրաստութիւնը, որ պէս զի իր յաջորդներուն, զորոնք սրտանց կ'ատէ, լաւ խաղ մը պատրաստէ, եւ անձանօթ ահարկու «...» ըն պայթիւնովը ահարեկէ իր եղբայրները, կամ եղբորորդիները, եւ իսլամութիւնը այն օրերը Համիար փնտռէ:

- Բայց, պարոն, այդ ամէնը ինչ լօզիկական թըւում է:
- Այո՛, պարոն, ես որ թիւրքերը կը ճանչնամ, այս ամէնը ինչ տրամաբանական կ'երեւի: Բայց դուք կը ժպտիք. կը կասկածիմ թէ բան մը գիտնալու էք. Պ.Ս. պարտօք այս յօդուածները բոլորովին սագարար չէ գրած:

Խորհրդաւոր մպխաով մը իգիտօգփ կօթնեղորդ կամ ութնորդ գաւաթը պարպեց:

Յանկարծ քանի մը վայրկեան մտածականի մէջ ընկողմեցայ, ու մէկէն ի մէկ ձախ փոխ ճակատս վարիլ, այնքան վսեմօրէն որ կարծես թէ ուղեղէս Աթենաս մը գուրս պիտի ցատքեցնէի:

- Գտայ, պարոն, գտայ:
- Ի՞նչ գտաք, պարոն, ի՞նչ, ինչպե՞ս ինչ էլ ասէք:
- Չեղոս իրեն երկնցնելով
- Սեղմեմ ձեռքերնիդ. նախախնամական հանդիպում: Երկու բառով բացատրեմ: Ամենասուսյգ ազբիւր. ներէ լուր ատած էի թէ սուլթանը Ասիական թիւրքի թէ ծովու և թէ ցամաքի սահմանադրութիւններու բոլոր իշխանութեանց հրաման տուած է ո՛չ միայն շարգիլել այլեւ բաջալերել հայ յեզափոխականներու կողմէն Հայաստան զէնքի փոխազրութիւնը...

— Չեմ հաւատում, պարոն, չեմ հաւատում, այնքան հիանալի է այդ լուրը. մի՞թէ Հայերը այդքան էլ բազաւոր կը լինեն...
— Պիտի հաւատաք, պարոն, պիտի հաւատաք. ես ալ մինչեւ այս րոպէիս շուարած էի, չէի կրնար հասկնալ թէ սուլթանը ի՞նչ պիտական ներշնչուած մղուած ատանկ հրաման մը տուած է. փա՛ռք քեզի, պարոն, հիմա ամէն ինչ արեւի լոյսին պարզ է աչքերնուս:

- Բայց պարոն, բայց պարոն, կը մըթմթար խեղճը խեղցնոր, իմ աչքիս ոչինչ պարզում է:
- Համբերեցէք, պարոն, համբերեցէք: Խնդրեմ ինչ ծի տուէք այդ ձեր ձեռքի թերթը:

Ան անելով մասնանիշ ըրի քանի մը անդ .

— Տեղք ինչ ահեղ իրականութիւն մը երեսն կը հանէ : Հայ յեղափոխականներուն կողմ ներքին դաւաճաները բաժնուած հրացանները ծախուեր են Քիւրտերուն : « Ազգային հրացանները ծախուեցան քրդերին . . . Հասկա . . . «նո՞ւմ էք, քրդերիկ ծախուեցան . . . Հայերի ձեռքով . . . »

— Վա՛ս Հայերը :

— Այժմ, պարոն, հետեցեք իմ արամաբանութեանը կամ ինչպէս զուր կ'ըսէք իմ լօզիկային : Որքան աւելի մեծաբանակ զէնք փոխադրուի Հայաստան, Քիւրտերն ալ այնքան աւելի շատ զէնք կը գնեն Հայերէն : Չէ :

— Այդպէս թուում է, կ'սկիւսց :

— Քիւրտերը սրբան աւելի շատ զէնք ունենան այնքան աւելի օգտակարապէս կը ծառայեն թիւրք կառավարութեան, եւ այնքան աւելի վերութեամբ կը կեղեքեն Հայերը : Թիւրք իշխանութիւնն ալ ետքէն Հայոց ձեռքէն կը խլէ Քիւրտերուն ծախուած հրացաններուն դրամը : Եւ այսպէս, պարոն, Հայ յեղափոխականները երկիրը զէնք մտցնելով թէ՛ Քիւրտերուն մեծ ծառայութիւն կը մատուցանեն, թէ՛ թիւրք իշխանութեան քաղաքական ու դրամական ծառայութիւն : Հետեւաբար խորապէս սուլթանը շատ շահ ունի հրամայելու որ յեղափոխականներուն կողմէ Հայաստան զէնքի փոխադրութիւնը քաջալերուի : Հիւսիսային, արեւու լոյսին պէս պայծառ չէ՞ պահ մը առաջ այնքան մթին երեցող զաղանիքը :

— Ախ, պարոն, լօզիկային դէմ ինչ կարող ենք ասել : Ես հենց այսօր պէտք է մեր բոլոր բերօժներին դրեմ որ այլ եւս զարեցնեն զէնքի առաքումը որպէս զի Քիւրտերին եւ Թրքերին մեր փողովը ծառայութիւն չըմատուցանենք : Դուք էլ, պարոն, այս ամէնը կը հրատարակէք, որպէս զի մի օր մեզ յեղափոխականներս պատասխանատու չը ճանաչեն :

— Պարտականութիւնն է, պարտականութիւնն է, պարոն :

Առաջին գաւաթն ամբողջացուցի. եւ հինգ վայրկեանի լուծենէ յետոյ, գաւաթն երկրորդելով, հանդիսաւորապէս խօսիլ սկսայ :

— Պ. Իղիօզօֆ, մենք այժմ քաղաքական ջերմ բարեկամներ ենք. ես ինձի չեմ ներքեր ձենէ ո՛ր եւ է զազանիք պահել, վասն զի գիտեմ թէ ձեր միջոցաւն է որ Հայ յեղափոխականութիւնը վերջնական յաղթանակը պիտի տանի : Ուրեմն, պարոն, ձեզի մեծ զաղանիք մը պիտի հաղորդեմ, եթէ խօսք կուտայ որ ոչ ոքի պիտի չըսէք :

— Յեղափոխականի ազնիւ խօսքս եմ տալիս :

— Ուրեմն . . .

Մեր գաւաթները իրար վարնելով,

— Ուրեմն, ձեզ հաղորդեմ թէ սուլթանը ինչ որ կարելի է պիտի ընէ ապագային հայկական մեծ ապստամբութիւն մը զիրացնելու համար :

Մարդը վեր վեր ցատեց .

— Չէ, պարոն, չէ, ինչպիսիւս եմ, պաղատում եմ, պաղատում եմ, հանաք մի անէք :

— Պարոն, կատարեալ սերտագործութիւն է այս պիտի պարզաներու մէջ : Հիմա ձեզի փաստելով ու լօզիկայով կը հաստատեմ : Դիտէ՛ք, պարոն Իղիօզօֆ, թէ Մուշ Չարդը ինչ լօզիկայի հետեւանք է : Պարզապէս ընդհանուր ապստամբութիւն մը զիրացնելու նպատակաւ սուլթանը այդ նոր կատարածը հրամայեց :

— Մի՛թէ :

— Այո՛, պարոն, հետեցեք իմ լօզիկային եւ շուտ պիտի համոզուիք իմ տեղեկութիւններու ստուգութեանը : Չեր կուտակցութիւնը իր էն հեղինակաւոր գրիչներով, որպիսի են Պ. Սաղաբարօֆ, Պ. Առփախիբօֆ, կը խրատուէ Հայերը թէ՛ « Մորթիւելով մորթիւելով Հայ ժողովուրդը մորթել պիտի ստիճի » :

— Այդպէս է, պարոն :

— Լաւ ուրեմն, ուր որ Հայ չէ մորթուեր այն տեղի Հայերը չեն գիտեր թէ ինչ է մորթիւլը, ինչպէս պէտք է մորթեն թշնամի թիւրքը :

— Լօզիկա, պարոն, լօզիկա :

— Ընդհանուր ապստամբութիւն մը հնարաւոր ընելու համար պէտք է որ Հայաստանի ամէն կողմի Հայերը մորթել ստիճաւ ըլլան, ապա թէ ոչ ապստամբութիւնը մասնակի կ'ըլլայ : Այն երջանիկ երկիրները ուր Չարդ եղած է, հին Հայերը կրնան ապստամբիլ եւ Թիւրքերը սպաննել, բայց այն դժբաղդ քաղաքները եւ գեղերը որոնք կատարածի հանդիպելու, մորթիւելու բողոք չեն ունեցած, անոնք ո՛ր տեղէն մորթել պէտք է գիտնան եւ ապստամբին :

— Լօզիկա, պարոն, լօզիկա :

— Մուշ Չարդէ ազատ մնաց. ուրեմն մշեցիները մորթել չստիճան, հետեւաբար եւ ընդհանուր ապստամբութեան մը ատեն ձեռքերին ծալլած պիտի նստին : Սուլթանը գուշակելով այս ապագան, հրամայեց որ Մուշ ալ Չարդ ըլլայ : Եւ որպէս զի մեծ օրը բոլոր Հայերը կազմ եւ պատրաստ գտնուին հարկ է որ Չարդեր հրամայէ այն տեղուանքը ուր բան մը չէր պատահած :

— Լօզիկա, պարոն, լօզիկա :

— Կրնա՞ք ձեր դաշնակցին աջակցութիւն մը մատուցանել :

— Շատ բան կարող ենք անել, պարոն. հենց այս րոպէին կը գնամ եւ մեր բոլոր բերօժներին կը հաղորդեմ այդ կարեւոր լուրը : Եւ կը խնդրեմ նրանցից որ մի ցուցակագրութիւն կազմեն այն քաղաքների եւ գեղերի ուր Չարդ տեղի չէ ունեցել եւ հաղորդեն սուլթանին Դադեանի միջոցաւ, որպէս զի իսկոյն եւ եթ մորթիւելու դատընթացքը աւանդվի այն տեղերում :

Իղիօզօֆ աճապարեց որ մեկնի եւ շուտ կատարէ իր յանձնառութիւնները :

— Բայց, պարոն, մի՛ ըսէք ես : Հիմակ ալ ես ձեր լօզիկային վիճում պիտի ընեմ : Մինչեւ այսօր չկարողացայ մեկնել թէ ինչպէս մորթուելով կարելի կ'ըլլայ մորթել ստիճիլ. մանաւանդ մորթուողը չեմ կարծեր որ այլ եւս սպրի : Ահա ոչխարները որ աշխարհիս տեղծուան ի վեր կը մորթուին եւ սակայն տակաւին մորթել չեն սորված :

— Դեհ, պարոն, ըսաւ. զուք ինձ այսօր ծառայութիւններ ժառանգիք, ես էլ այժմ ձեզ ասեմ ինչ որ ցանկանում էք: Նախ ասեմ թէ՛ սխարններն էլ մի օր պէտք է ժողովել սովորեն էլօլուցիայի օրէնքով. չէ՛ որ կապիկները մարդ են դառել. ինչո՞ւ ուրեմն սխարններն էլ մի օր հայուկներ չը լինին:

— Լօգիկա, պարոն, լօգիկա:

— Չէ՛:

— Բայց թողնենք այդ ամենը. այդ ժամանակի կարօտ է: Ես այժմ ձեզ մի պատմութիւն ասեմ՝ դա կատարելապէս ստոյգ է, Հայաստանում տեղի ունեցել է, եւ բոլոր Հայերին ծանօթ է: Դուք այդ պատմութիւնից լօգիկայով կարող էք հետեցնել թէ ի՞նչպէս հնար է մտածել սովորել: Դուք, պարոն, անշուշտ լսել էք Կայենի եւ Արելի պատմութիւնը:

— Այդ հին բանք:

— Որ այդ հին չէ. մեծ պատմութիւն է, մեծ: Պարոն, դեռ այդ ժամանակ ոչ ոք չէր սպաննուել, եւ չկարծեմ Կայեն սպանութեան վրայ որոշ գաղափար ունենար: Նա ցանկանում էր իւր եղբորը մի բան անել, բայց չէր դիտեր ի՞նչ անել: Եւ ահա սատանան մի թռչուն բռնում է եւ մի շախմատով նրա վզիցը կտրում է. թռչունը մեռնում է. Կայեն այս տեսնելիս կ'ուսան թէ ի՞նչ է մահը, եւ ինչպէս պէտք է սպաննել եղբորը: Այժմ, պարոն, մեր հայաստանցիներն էլ, երբ տեսնում են թէ մի թիւրք մի երկաթի կտորով երբ խփում է մի հայինա իսկոյն և եթ այլ եւս չէ խօսում, վեր է գլորտում, կ'իմանան թէ մի բան պէտք է լինի այդ տեղ, թէ մահը այդ պէտք է լինի. ուրեմն որ կը սովորին այդ, մի օր էլ իրանք կ'անեն: Հասկանում էք, պարոն:

— Լօգիկա, պարոն, լօգիկա: Կը տեսնեմ թէ զուք ամէն բան լօգիկայով կ'ընէք:

— Չէ՛: Ուրեմն ես գնամ յանձնարարութիւնները իսկոյն կատարեմ: Յը...

Եւ ձեռքս ուժգին սղմելով մեկնեցաւ:

ՍԿԵՊՏԻԿ

L O T T E R

Կ. Պոլսէն կը գրեն մեզ.
« Մոշրակէն կողմէ Արքիէ փաշայիէ եղած խոստոռակերք՝ բարեկերպութեան գործադրութեան սկզբնաշրջութեան մասին, դեռ իրականանալու նշան մը ցոյց չտուի, քեզ Օրմանեան փոշրաց քարագի մէջ աշտարակ հաղորդել ժողովրդիս: »

Այս տեղեկութեան ստանալի յետոյ, « Թայմզ » ին մէջ կարդացիք քի նորին սկսած են բազմաթիւ Հայեր ձերբակալել, այն պատրուակով քի յեղափոխական դիտուել:

ներ ունին: Կ'երեւայ քի այդ խմբովի ձերբակալութեան շրջանի իրական բարիքներ կը համարուին ազգին համար, որովհետեւ Արքիէ փաշա ետ առած է իր հրաժարականը:

— Կ. Պոլսէն նետեւայ մակրամսակոտորիները կը հաղորդեն մեզի Սամարիոյ հայ աղջկանց վարժարանին պատը փակցուած յեղափոխական յայտարարութեան մասին, որ պահ մը Քիչրտերու գործը կարծառեցաւ:

« Արշակեան անուն երիտասարդ մը, որ ամիսէ մը ի վեր բանար կը գտնուէր, տեղեկագիր մը կուտայ ուստիականութեան նախարարիէ քի իր ունեցած հիմնադր տեղեկութեանցը համեմատ Հայերը նոր ցոյց մը պիտի ընեն Պոլիս: Տեղեկագրիէ քանի մը օր վերջը յայտարարութիւն մը կը փակցուի Սամարիոյ աղջկանց վարժարանին պատին վրայ, հրաշք կարդալով բոլոր Հայոց միանալ եւ սիրել զիրար, վասն զի « վսեմ վայրկեանը » մտեցած էր: Ասոր վրայ, Արշակեան ուստիականութեան նախարարիէ հարցափորձուելով, կը յայտնէ քի իւր կարող է այդ յայտարարութեան հեղինակները գտնել երբ զիկքը 24 ժամ ազատ ձգուի: Բանտէն ելլելուն, տեղեկագիր մը կը ներկայացնէ ոչ իրեւ այդ յայտարարութեան հեղինակ կ'ամբաստանուի Չատիկեան, Գրիգոր եւ Սերոբէ, որոնք անմիջապէս կը ձերբակալուին: Երկու օր ետքը Արշակեանի քոյրը նեղը մեալով կը խոստովանի քի յայտարարութեան իրական հեղինակներն էին իր եղբայրն ու Գասնիկ Բօշատ, եւ իր մայրն ալ մեղաւիջ էր անոնց: Մայրը Արշակեան ու Գասնիկ Բօշատ նոյն հետախուզի կը ձերբակալուին եւ կը բանտարկուին: »

— Պերտրի անգլ. հիշատակար կը տեղեկագրէ քի յոյն հարուստ վաճառական մը 97 հե ի վեր Ատանայի մէջ մահածի գործարան մը հաստատած է, որ շրջակայ գաւառներուն պէտք եղած մահածը կը հայրայրի:

ՀԱՍՏԷ ՈՒ ԲԱԺՆԵԿԻՆ

ՆՈՐ ԿԵԱՆԻԻ վերաբերեալ նամակ ու բաժնեգին շրկել առ

L. FRANK,
32, CHESTERTON ROAD,
(ENGLAND). LONDON, W.

ՆՈՐ ԿԵԱՆԻՔ կը հրատարակուի ամէն ամսու 1 ին եւ 1 թիւ: Բաժնեգին է Եւրոպայի համար տարեկան 10 եւ վեցամսեայ 5 ֆրանք, Ամերիկայի համար տարեկան 2 եւ վեցամսեայ 1 տոլար: